

ՈՉ ՊՍՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԻ 1993 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 40/94 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՀ)

Համայնքի ապրանքային նշանի մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 235-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը¹,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը²,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը³,

քանի որ ցանկալի է ողջ Համայնքում խթանել տնտեսական գործունեության ներդաշնակ զարգացումը և շարունակական ու հավասարակշռված ընդլայնումը՝ ավարտին հասցնելով պատշաճ կերպով գործող և ներպետական շուկայի պայմաններին համանման պայմաններ առաջարկող ներքին շուկայի ձևավորումը. քանի որ նմանատիպ շուկա ստեղծելու և այն աստիճանաբար միասնական շուկա դարձնելու նպատակով ոչ միայն ապրանքների և ծառայությունների ազատ տեղաշարժի խոչընդոտները պետք է վերացվեն և մրցակցության խաթարումը բացառող միջոցներ ձեռնարկվեն, այլ ավելին՝ պետք է ստեղծվեն իրավական պայմաններ, որոնք հնարավորություն կտան կազմակերպություններին իրենց գործունեությունը հարմարեցնել Համայնքի ծավալին թե՛ ապրանքների արտադրման ու բաշխման և թե՛ ծառայությունների մատուցման գործում. քանի որ նշված նպատակներից ելնելով, ապրանքային նշանները, որոնք, անկախ սահմաններից, ողջ Համայնքում կազմակերպությունների ապրանքները և ծառայությունները միասնական ձևով տարբերակելու հնարավորություն են տալիս, պետք է դասվեն կազմակերպությունների տրամադրության տակ գտնվող իրավական գործիքների շարքին,

քանի որ Համայնքի գործողություններն անհրաժեշտ են Համայնքի վերը նշված նպատակներին հասնելու համար. քանի որ նման գործողությունները ներառում են ապրանքային նշանների վերաբերյալ Համայնքային պայմանավորվածությունների ձեռքբերում, որոնց օգնությամբ կազմակերպությունները մեկ ընթացակարգային համակարգի միջոցով կարող են ձեռք բերել միասնական կերպով պահպանվող և Համայնքի ողջ տարածքում գործող ապրանքային նշաններ. քանի որ Համայնքի ապրանքային նշանի սույն Կանոնակարգում նշված միասնական բնույթի սկզբունքը կիրառվում է, եթե այլ բան նախատեսված չէ դրանով,

քանի որ ապրանքային նշանների սեփականատերերին անդամ պետությունների իրավական ակտերով շնորհիվ իրավունքների տարածքային կիրառության խոչընդոտը չի կարող վերացվել իրավական ակտերի համապատասխանեցմամբ. քանի որ ողջ ընդհանուր շուկայում ի նպաստ կազմակերպությունների անսահմանափակ տնտեսական գործունեությանը սկիզբ դնելու համար անհրաժեշտ է ստեղծել ապրանքային նշաններ, որոնք

¹ ՊՏ թիվ C 351, 31.12.1980թ., էջ 1 և ՊՏ թիվ C 230, 31.08.1984թ., էջ 1:

² ՊՏ թիվ C 307, 14.11.1983թ., էջ 46 և ՊՏ թիվ C 280, 28.10.1991թ., էջ 153:

³ ՊՏ թիվ C 310, 30.11.1981թ., էջ 22:

կարգավորվում են բոլոր անդամ պետություններում անմիջականորեն գործող Համայնքի միասնական իրավական նորմերով,

քանի որ Պայմանագրով նման իրավական փաստաթուղթ ստեղծելու համար անհրաժեշտ հատուկ լիազորություններ չեն նախատեսվում, պետք է կիրառվի Պայմանագրի 235-րդ հոդվածը,

քանի որ, այնուամենայնիվ, Համայնքի՝ ապրանքային նշանների մասին իրավական ակտերը չեն փոխարինում անդամ պետությունների՝ ապրանքային նշանների մասին իրավական ակտերին, քանի որ ըստ էության հիմնավորված չէր լինի կազմակերպություններից պահանջել՝ իրենց ապրանքային նշանները որպես Համայնքի ապրանքային նշաններ գրանցելու հայտ ներկայացնել. քանի որ ներպետական ապրանքային նշաններն անհրաժեշտ են այն կազմակերպությունների համար, որոնք չեն ցանկանում, որ իրենց ապրանքային նշանները պահպանվեն Համայնքի մակարդակով,

քանի որ Համայնքի ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները հնարավոր է ձեռք բերել միայն ապրանքային նշանի գրանցմամբ, և գրանցումը պետք է մերժվի, մասնավորապես, եթե ապրանքային նշանը չունի տարբերակիչ հատկանիշ, եթե այն օգտագործվում է անօրինական կերպով, կամ եթե այն հակասություն է առաջացնում առավել վաղ ծագած իրավունքների հետ,

քանի որ Համայնքի ապրանքային նշանով երաշխավորված պահպանությունը, որի գործառույթն է, մասնավորապես, ապահովել, որ ապրանքային նշանը հանդիսանա ապրանքի ծագման ցուցիչ, բացարձակ է ապրանքային նշանի և այլ նշանի ու ապրանքների կամ ծառայությունների նույնականության դեպքում. քանի որ այդ պահպանությունը կիրառվում է նաև ապրանքային նշանի և այլ նշանի ու ապրանքների կամ ծառայությունների նմանության դեպքում. քանի որ անհրաժեշտ է մեկնաբանել նմանության հասկացությունը՝ ապրանքային նշանը շփոթելու հավանականության հետ կապված. քանի որ ապրանքային նշանը շփոթելու հավանականությունը, որի գնահատումը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, մասնավորապես՝ շուկայում ապրանքային նշանը ճանաչելուց, օգտագործվող կամ գրանցված նշանի հետ հնարավոր գուգակցումներից, ապրանքային նշանի և այլ նշանի, նախատեսված ապրանքների կամ ծառայությունների նմանության աստիճանից, հանդիսանում է նման պահպանություն ապահովելու հատուկ պայմանը,

քանի որ ապրանքների ազատ հոսքի սկզբունքից բխում է, որ Համայնքի ապրանքային նշանի սեփականատերը չպետք է իրավունք ունենա արգելելու դրա օգտագործումը երրորդ անձի կողմից՝ ապրանքային նշանի ներքո Համայնքում իր կողմից կամ իր համաձայնությամբ շրջանառության մեջ դրված ապրանքների մասով՝ բացառությամբ, եթե ապրանքային նշանի սեփականատերն ունի օրինական հիմքեր՝ առարկելու ապրանքների հետագա առևտրայնացմանը,

քանի որ Համայնքի ապրանքային նշանների կամ դրանց համեմատ ավելի վաղ գրանցված ցանկացած ապրանքային նշանի պահպանությունը հիմնավորված է, եթե միայն ապրանքային նշանները փաստացի օգտագործվում են,

քանի որ Համայնքի ապրանքային նշանը պետք է համարվի սեփականության օբյեկտ, որը գոյություն ունի այն կազմակերպություններից առանձին, որոնց ապրանքները և ծառայությունները նշվում են դրանով. քանի որ, համապատասխանաբար, այն պետք է լինի փոխանցելի՝ ելնելով փոխանցման արդյունքում հանրության մոլորեցումը կանխելու գերակա անհրաժեշտությունից: Այն նաև պարտավորությունների ապահովման միջոց և լիցենզիաների առարկա դառնալու հնարավորություն պետք է ունենա.

քանի որ սույն Կանոնակարգով ընդունված՝ ապրանքային նշանի մասին իրավական նորմերը յուրաքանչյուր ապրանքային նշանի դեպքում կիրարկելու համար անհրաժեշտ են Համայնքի մակարդակով վարչական ակտեր. քանի որ, պահպանելով Համայնքի՝ գոյություն ունեցող ինստիտուցիոնալ կառուցվածքը և լիազորությունների հավասարակշռությունը, անհրաժեշտ է ստեղծել Ներքին շուկայում (ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ) համապատասխանեցման գրասենյակ, որն անկախ է տեխնիկական հարցերում և ունի իրավական, վարչական և ֆինանսական ինքնավարություն. քանի որ այս նպատակով, անհրաժեշտ և նպատակահարմար է, որ այն լինի Համայնքի՝ իրավասուբյեկտություն ունեցող մարմին, որն իրականացնում է սույն Կանոնակարգով իրեն վերապահված կիրարկող լիազորություններ, և այն պետք է գործի Համայնքի իրավունքի շրջանակներում՝ չսահմանափակելով Համայնքի կառույցների կողմից իրականացվող լիազորությունների շրջանակը,

քանի որ անհրաժեշտ է ապահովել, որ այն անձինք, որոնց շոշափում են Գրասենյակի կայացրած որոշումները, պաշտպանված լինեն օրենքով՝ ապրանքային նշանի իրավունքի հատուկ բնույթին համապատասխանող կարգով. քանի որ այդ նպատակով նախատեսվել է դրույթ՝ քննողների և Գրասենյակի տարբեր բաժինների կայացրած որոշումները բողոքարկելու համար. քանի որ եթե վարչությունը, որի որոշումները վիճարկվում են, չի փոփոխում իր որոշումը, այն պետք է բողոքը փոխանցի Գրասենյակի բողոքարկման խորհուրդ՝ դրա վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով. քանի որ Բողոքարկման խորհուրդների որոշումների առնչությամբ, իր հերթին, հայց կարող է հարուցվել Եվրոպական համայնքների արդարադատության դատարան, որն իրավասու է անվավեր ճանաչել կամ փոփոխել վիճարկվող որոշումը.

քանի որ 1993 թվականի հունիսի 8-ի թիվ 93/350/Եվրատոմ, ԱՊԵՀ, ԵՏՀ որոշմամբ⁴ փոփոխված «Եվրոպական համայնքների առաջին ատյանի դատարանի ստեղծման մասին» Խորհրդի 1988 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 88/591/ԱՊԵՀ, ԵՏՀ, Եվրատոմ որոշման⁵ համաձայն այդ Դատարանը՝ որպես առաջին ատյան, իրականացնում է «Համայնքների հիմնադրման մասին» պայմանագրերով Արդարադատության դատարանին վերապահված իրավասությունը՝ մասնավորապես ուշադրություն դարձնելով ԵՀ պայմանագրի 173-րդ հոդվածի 2-րդ ենթապարբերության, ինչպես նաև դրա կիրարկման համար ընդունված ակտերի համաձայն բերված բողոքներին, եթե այլ բան նախատեսված չէ Համայնքի իրավունքով կարգավորվող մարմնի ստեղծման մասին ակտով. քանի որ սույն Կանոնակարգով Արդարադատության դատարանին վերապահված՝ վերաքննիչ դատարանների որոշումները բեկանելու և փոփոխելու իրավասությունը առաջին ատյանում համապատասխանաբար իրականացնում է Դատարանը՝ վերը նշված որոշմանը համապատասխան,

քանի որ Համայնքի ապրանքային նշանների պահպանությունն ամրապնդելու համար անդամ պետությունները, հաշվի առնելով իրենց ներպետական համակարգերի առանձնահատկությունները, պետք է հնարավորինս սահմանափակ թվով առաջին և երկրորդ ատյանի ներպետական դատարաններ նշանակեն, որոնք իրավասություն կունենան Համայնքի ապրանքային նշանների ապօրինի օգտագործման և վավերության հարցերի նկատմամբ,

քանի որ Համայնքի ապրանքային նշանների վավերության և ապօրինի օգտագործման վերաբերյալ որոշումների գործողությունը պետք է տարածվի ողջ Համայնքի վրա, քանի որ դա

⁴ ՊՏ թիվ L 144, 16.06.1993թ., էջ 21:

⁵ ՊՏ թիվ L 319, 25.11.1988թ., էջ 1, իսկ տպագրական վրիպակները՝ ՊՏ թիվ L 241, 17.08.1989թ., էջ 4:

միակ ճանապարհն է դատարանների և Գրասենյակի կողմից անհետևողական որոշումների կայացումը կանխելու, ինչպես նաև ապահովելու, որ Համայնքի ապրանքային նշանի միասնական բնույթը չխաթարվի. քանի որ «Քաղաքացիական և առևտրային գործերով իրավասության և վճիռների կատարման մասին» Բրյուսելի կոնվենցիայի կանոնները կկիրառվեն Համայնքի ապրանքային նշանների վերաբերյալ բոլոր հայցերի նկատմամբ, եթե սույն Կանոնակարգով շեղում չի կատարվում նշված կանոններից,

քանի որ պետք է խուսափել այնպիսի գործերի վերաբերյալ իրարամերժ վճիռների կայացումից, որոնք ներառում են նույն գործողությունները և նույն կողմերին և, որոնք հարուցվել են Համայնքի ապրանքային նշանի և համապատասխան ներպետական ապրանքային նշանների վերաբերյալ. քանի որ այս նպատակով, երբ հայցերը հարուցվում են նույն անդամ պետությունում, նշվածին հասնելու եղանակը պետք է կարգավորվի ներպետական դատավարական նորմերով, որոնց գործողությունը չի սահմանափակվում սույն Կանոնակարգով, իսկ երբ հայցերը հարուցվում են տարբեր անդամ պետություններում, նպատակահարմար է այն դրույթների կիրառումը, որոնց հիմքում վերը նշված Բրյուսելի կոնվենցիայի՝ վարույթում գտնվող հայցերի և փոխկապակցված հայցերի մասին կանոններն են,

քանի որ Գրասենյակի լրիվ ինքնավարությունն ու անկախությունը երաշխավորելու համար անհրաժեշտ է համարվում, որպեսզի այն առանձին բյուջե ունենա, որի եկամուտը հիմնականում գոյանում է համակարգն օգտագործողների վճարած տուրքերից. քանի որ, այնուամենայնիվ, Համայնքի բյուջետային գործընթացը կիրառելի է այնքան ժամանակ, քանի դեռ լուծվում է Եվրոպական համայնքների ընդհանուր բյուջեից տրամադրվող ցանկացած սուբսիդիայի հարցը. քանի որ ավելին՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտը պետք է իրականացվի Աուդիտորների դատարանի կողմից,

քանի որ Կանոնակարգի կիրառման համար անհրաժեշտ են կիրարկող ակտեր, մասնավորապես տուրքերի մասին կանոնակարգերի, ինչպես նաև Կիրարկող կանոնակարգի ընդունման և դրանցում փոփոխություններ կատարելու վերաբերյալ. քանի որ նշված ակտերը պետք է ընդունվեն Հանձնաժողովի կողմից անդամ պետությունների ներկայացուցիչներից կազմված Կոմիտեի աջակցությամբ՝ Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգերը սահմանող Խորհրդի 1987 թվականի հուլիսի 13-ի թիվ 87/373/ԵՏՀ որոշումների 2-րդ հոդվածի III«բ» ընթացակարգով սահմանված ընթացակարգային կանոններին համապատասխան⁶,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Համայնքի ապրանքային նշանը

1. Ապրանքների կամ ծառայությունների նկատմամբ օգտագործվող ապրանքային նշանը, որը գրանցված է սույն Կանոնակարգի պայմաններին համապատասխան և դրանով նախատեսված կարգով, այսուհետ կոչվում է «Համայնքի ապրանքային նշան»:

⁶ ՊՏ թիվ L 197, 18.07.1987թ. էջ.33:

2. Համայնքի ապրանքային նշանն ունի միասնական բնույթ: Այն ողջ Համայնքում գործում է հավասարապես. դրա գրանցումը, փոխանցումը կամ զիջումը, սեփականատիրոջ իրավունքները չեղյալ հայտարարող կամ անվավեր ճանաչող որոշումը, ինչպես նաև դրա օգտագործման արգելքը կիրառվում են ողջ Համայնքում: Սույն սկզբունքը կիրառվում է, եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոնակարգով:

Հոդված 2

Գրասենյակը

Սույն Կանոնակարգով ստեղծվում է Ներքին շուկայում (ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ) համապատասխանեցման գրասենյակ, այսուհետ՝ «Գրասենյակ»:

Հոդված 3

Իրավունակությունը

Սույն Կանոնակարգի կիրարկման նպատակով ընկերությունները կամ ֆիրմաները և իրավաբանական այլ մարմինները համարվում են իրավաբանական անձինք, եթե դրանց նկատմամբ կիրառվող իրավունքի պայմանների համաձայն՝ դրանք կարող են իրենց անունից ձեռք բերել և իրականացնել բոլոր տեսակի իրավունքներ և պարտականություններ, կնքել պայմանագրեր կամ իրականացնել իրավաբանական այլ գործողություններ և դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

ԲԱԺԻՆ II. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՄԱՍ 1

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼԸ

Հոդված 4

Համայնքի ապրանքային նշանը կազմող նշանները

Համայնքի ապրանքային նշանը կարող է ներառել գրաֆիկական պատկերի միջոցով ներկայացվող ցանկացած նշան, մասնավորապես՝ բառեր, այդ թվում՝ անձնանուններ, գծանկարներ, տառեր, թվեր, ապրանքների կամ դրանց փաթեթավորման արտաքին ձևը՝ պայմանով, որ այդ նշանների միջոցով հնարավոր է տարբերակել մեկ կազմակերպության ապրանքներն ու ծառայություններն այլ կազմակերպությունների ապրանքներից ու ծառայություններից:

Հոդված 5

Համայնքի ապրանքային նշանների սեփականատեր լինելու իրավունք ունեցող անձինք

1. Հետևյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, այդ թվում՝ հանրային իրավունքի համաձայն ստեղծված մարմինները, կարող են լինել Համայնքի ապրանքային նշանների սեփականատերեր՝

ա) անդամ պետությունների քաղաքացիները կամ

բ) «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» Փարիզի կոնվենցիայի (այսուհետ՝ «Փարիզի կոնվենցիա») մասնակից այլ պետությունների քաղաքացիները, կամ

գ) Փարիզի կոնվենցիայի մասնակից չհանդիսացող պետությունների քաղաքացիները, որոնց բնակության (գտնվելու) վայրը կամ կառավարման վայրը, կամ իրական և գործող արդյունաբերական կամ առևտրային գործունեության վայրը Համայնքի տարածքում կամ Փարիզի կոնվենցիայի մասնակից պետությունում է, կամ

դ) «գ» ենթապարբերությունում նշված քաղաքացիներից բացի, Փարիզի կոնվենցիայի մասնակից չհանդիսացող ցանկացած այն պետության քաղաքացիները, որը, համաձայն հրապարակված տվյալների, բոլոր անդամ պետությունների քաղաքացիներին ապրանքային նշանների նույն պահպանությունն է տրամադրում, ինչ իր սեփական քաղաքացիներին, և էթե այդ պետությունը անդամ պետությունների քաղաքացիներից ծագման երկրում ապրանքային նշանի գրանցման ապացույց է պահանջում, Համայնքի ապրանքային նշանների գրանցումն ընդունում է որպես այդպիսի ապացույց:

2. 1-ին պարբերության կիրառման նպատակով՝ 1954 թվականի սեպտեմբերի 28-ին Նյու Յորքում ստորագրված՝ Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի վերաբերյալ կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով քաղաքացիություն չունեցող անձինք, և 1951 թվականի հուլիսի 28-ին Շվեդում ստորագրված ու 1967 թվականի հունվարի 31-ին Նյու Յորքում ստորագրված և Փախստականների կարգավիճակի վերաբերյալ արձանագրությամբ փոփոխված՝ Փախստականների կարգավիճակի վերաբերյալ կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով փախստականները համարվում են իրենց բնակության վայրի երկրի քաղաքացիներ:

3. Այն պետությունների քաղաքացիները հանդիսացող անձինք, որոնց վրա տարածվում է պարբերություն 1«դ»-ն, պետք է ապացուցեն, որ այն ապրանքային նշանը, որի համար ներկայացվել է Համայնքի ապրանքային նշանի հայտը, գրանցված է ծագման երկրում՝ բացառությամբ, երբ, հրապարակված տվյալների համաձայն, տվյալ ծագման պետությունում անդամ պետությունների քաղաքացիների ապրանքային նշանները գրանցվում են առանց նախկինում որպես Համայնքի կամ ազգային ապրանքային նշան գրանցված լինելու ապացույցի պահանջի:

Հոդված 6

Համայնքի ապրանքային նշանի ձեռքբերման եղանակները

Համայնքի ապրանքային նշանը ձեռք է բերվում դրա գրանցմամբ:

Հոդված 7

Ապրանքային նշանի գրանցումը մերժելու բացարձակ հիմքերը

1. Հետևյալ նշանները ենթակա չեն գրանցման՝

ա) այն նշանները, որոնք չեն համապատասխանում 4-րդ հոդվածի պահանջներին.

բ) այն ապրանքային նշանները, որոնք չունեն որևէ տարբերակիչ հատկանիշ.

գ) այն ապրանքային նշանները, որոնք բացառապես բաղկացած են այնպիսի նշաններից և նշումներից, որոնք կարող են օգտագործվել առևտրում՝ նշելու ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, նպատակային նշանակությունը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ ապրանքի արտադրման կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքների կամ ծառայությունների այլ հատկությունները.

դ) այն ապրանքային նշանները, որոնք բաղկացած են բացառապես այնպիսի նշաններից և նշումներից, որոնք համընդհանուր գործածության մեջ են մտել տվյալ պահին գործածվող լեզվում կամ բարեխիղճ և հաստատված առևտրային գործելակերպում.

ե) նշանները, որոնք բացառապես ներկայացնում են՝

i) ապրանքի արտաքին ձևը, որը բխում է հենց ապրանքի բնույթից, կամ

ii) ապրանքի՝ տեխնիկական արդյունքի հասնելու համար անհրաժեշտ արտաքին ձևը, կամ

iii) ապրանքի արտաքին ձևը, որն ապրանքին տալիս է էական արժեք.

զ) ապրանքային նշանները, որոնք հակասում են հանրային կարգին կամ բարոյականության ընդունված սկզբունքներին.

է) ապրանքային նշանները, որոնք իրենց բնույթով մոլորության մեջ են գցում հանրությանը, օրինակ՝ ապրանքի կամ ծառայության բնույթի, որակի կամ աշխարհագրական ծագման հարցում.

ը) ապրանքային նշանները, որոնց գրանցումը չի թույլատրվել լիազոր մարմնի կողմից և ենթակա է մերժման՝ Փարիզի կոնվենցիայի 6-եր հոդվածին համապատասխան,

i) ապրանքային նշանները, որոնք ներառում են Փարիզի կոնվենցիայի 6-եր հոդվածով սահմանվածից բացի այլ հավատարմաքարտեր, խորհրդանիշներ կամ զինանշանի պատկերաքանդակներ, և որոնք հատուկ հանրային շահ են ներկայացնում՝ բացառությամբ, երբ համապատասխան մարմինները գրանցման համար համաձայնություն են տվել:

2. 1-ին պարբերությունը կիրառվում է անկախ այն բանից, որ ապրանքային նշանի գրանցումը մերժելու հիմքերն առկա են Համայնքի միայն մի մասում:

3. Պարբերություններ 1«բ»-ն, «գ»-ն և «դ»-ն չեն կիրառվում, եթե ապրանքային նշանը օգտագործման արդյունքում ձեռք է բերել տարբերակիչ հատկանիշ այն ապրանքների կամ ծառայությունների համար, որոնց համար խնդրարկվում է ապրանքային նշանի գրանցումը:

Հոդված 8

Ապրանքային նշանի գրանցումը մերժելու հարաբերական հիմքերը

1. Ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանի սեփականատիրոջ առարկության դեպքում հայտարկվող ապրանքային նշանը չի գրանցվում՝

ա) եթե այն նույնական է ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանին, և եթե այն ապրանքներն ու ծառայությունները, որոնց համար ապրանքային նշանի գրանցման հայտ է ներկայացվել, նույնական են այն ապրանքներին և ծառայություններին, որոնց համար պահպանվում է ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանը.

բ) եթե ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանին նույնական կամ նման և դրանով նշվող ապրանքներին կամ ծառայություններին նույնական կամ նման լինելու պատճառով առկա է հանրության կողմից դրանք շփոթելու հավանականություն այն տարածքում, որտեղ պահպանվում է ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանը. շփոթմունքի հավանականություն է համարվում նաև ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանի հետ գուգակցման հավանականությունը:

2. 1-ին պարբերության իմաստով «ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշաններ» նշանակում է՝

ա) հետևյալ տեսակի ապրանքային նշանները, որոնց գրանցման հայտը ներկայացնելու տարին, ամիսը, ամսաթիվը (այսուհետ՝ թվականը) նախորդում է Համայնքի ապրանքային նշանի գրանցման հայտը ներկայացնելու թվականին՝ ըստ անհրաժեշտության հաշվի առնելով այդ ապրանքային նշանների վերաբերյալ խնդրարկվող առաջնությունները.

i) Համայնքի ապրանքային նշանները.

ii) անդամ պետությունում գրանցված ապրանքային նշանները կամ Բելգիայի, Նիդերլանդների կամ Լյուքսեմբուրգի դեպքում՝ Բենիլյուքսի ապրանքային նշանների հարցերով գրասենյակում գրանցված ապրանքային նշանները.

iii) անդամ պետությունում գործող միջազգային պայմանավորվածությունների համաձայն գրանցված ապրանքային նշանները.

գ) «ա» ենթապարբերությունում նշված ապրանքային նշանների հայտերը՝ դրանց գրանցման դեպքում.

դ) այն ապրանքային նշանները, որոնք Համայնքի ապրանքային նշանի գրանցման հայտը ներկայացնելու թվականին կամ, հարկ եղած դեպքում, Համայնքի ապրանքային նշանի գրանցման հայտի մասով խնդրարկված առաջնության թվականին, հանրահայտ են անդամ պետությունում՝ Փարիզի կոնվենցիայի 6bis հոդվածի իմաստով:

3. Ապրանքային նշանի սեփականատիրոջ առարկության դեպքում ապրանքային նշանը չի գրանցվում, եթե ապրանքային նշանի սեփականատիրոջ գործակալը կամ ներկայացուցիչը, առանց սեփականատիրոջ համաձայնության, իր անունից տվյալ նշանի գրանցման հայտ է ներկայացրել՝ Բացառությամբ, եթե գործակալը կամ ներկայացուցիչը հիմնավորում է իր գործողությունները:

4. Չգրանցված ապրանքային նշանի կամ ոչ միայն գուտ տեղական նշանակության առևտրային գործունեության ընթացքում օգտագործվող այլ նշանի սեփականատիրոջ առարկության դեպքում հայտարկվող ապրանքային նշանը չի գրանցվում, եթե և այնքանով, որքանով այդ նշանը կարգավորող անդամ պետության իրավունքի համաձայն՝

ա) այդ նշանի նկատմամբ իրավունքները ձեռք են բերվել Համայնքի ապրանքային նշանի գրանցման հայտը ներկայացնելու կամ Համայնքի ապրանքային նշանի գրանցման հայտի համար խնդրարկված առաջնության թվականից առաջ.

բ) այդ նշանով վերջինիս սեփականատիրոջը իրավունք է շնորհվում՝ արգելելու ավելի ուշ գրանցված ապրանքային նշանի օգտագործումը:

5. Ավելին, 2-րդ պարբերության իմաստով ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանի սեփականատիրոջ առարկության դեպքում, հայտարկվող ապրանքային նշանը չի գրանցվում, եթե այն նույնական կամ նման է ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանին և պետք է գրանցվի այնպիսի ապրանքների կամ ծառայությունների համար, որոնք նման չեն այն ապրանքներին և ծառայություններին, որոնց համար գրանցվել է ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանը, եթե ավելի վաղ առաջնությամբ Համայնքի ապրանքային նշանի դեպքում ապրանքային նշանը ճանաչված է Համայնքում, իսկ ավելի վաղ առաջնությամբ ներպետական ապրանքային նշանի դեպքում՝ ապրանքային նշանը ճանաչված է համապատասխան անդամ պետությունում, և եթե հայտարկված ապրանքային նշանի՝ առանց պատշաճ հիմնավորման օգտագործմամբ ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանի ճանաչման և տարբերակիչ հատկանիշի նկատմամբ անարդարացի առավելություն կրնձեռվեր կամ այդ ճանաչումն ու հատկանիշը վնաս կկրեին:

ՄԱՍ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 9

Համայնքի ապրանքային նշանով վերապահվող իրավունքները

1. Համայնքի ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքները պատկանում են դրա սեփականատիրոջը: Սեփականատերն իրավունք ունի արգելելու բոլոր երրորդ անձանց՝ առևտրային գործունեության ընթացքում առանց իր թույլտվության օգտագործել՝

ա) ցանկացած նշան, որը նույնական է Համայնքի ապրանքային նշանին այն ապրանքների կամ ծառայությունների մասով, որոնք նույնատիպ են այն ապրանքներին և ծառայություններին, որոնց համար գրանցվել է Համայնքի ապրանքային նշանը.

բ) ցանկացած նշան, եթե Համայնքի ապրանքային նշանին նույնականության կամ նմանության և Համայնքի ապրանքային նշանով ու տվյալ նշանով նշվող ապրանքների կամ ծառայությունների նույնականության կամ նմանության պատճառով առկա է հանրության կողմից դրանք շփոթելու հավանականություն. շփոթմունք կարող է առաջանալ ապրանքային նշանի հետ տվյալ նշանի գույնակցման հավանականությունից.

գ) որևէ նշան, որը նույնական կամ նման է Համայնքի ապրանքային նշանին այն ապրանքների կամ ծառայությունների մասով, որոնք նման չեն այն ապրանքներին կամ ծառայություններին, որոնց համար գրանցվել է Համայնքի ապրանքային նշանը, եթե վերջինս

ճանաչված է Համայնքում, և եթե այդ նշանի՝ առանց պատշաճ հիմնավորման օգտագործմամբ Համայնքի ապրանքային նշանի ճանաչման և տարբերակիչ հատկանիշի նկատմամբ անարդարացի առավելություն է ընձեռնվում կամ այդ ճանաչումն ու հատկանիշը վնաս են կրում:

2. 1-ին պարբերության համաձայն սեփականատերը կարող է, մասնավորապես, արգելել՝

ա) ապրանքների կամ դրանց փաթեթավորման վրա նշանի գետեղումը.

բ) տվյալ նշանի ներքո ապրանքների առաջարկը կամ դրանք վաճառքի հանելը կամ այդ նպատակներով ապրանքի պահեստավորումը, ինչպես նաև ծառայությունների առաջարկը կամ մատուցումը.

գ) այդ նշանի ներքո ապրանքների ներմուծումը կամ արտահանումը.

դ) այդ նշանի օգտագործումը պաշտոնական ձևաթղթերում կամ գովազդում:

3. Համայնքի ապրանքային նշանով վերապահված իրավունքները գերակայում են երրորդ անձանց իրավունքների նկատմամբ ապրանքային նշանի գրանցման հրապարակման օրվանից: Այնուամենայնիվ, ողջամիտ փոխհատուցում կարող է պահանջվել Համայնքի ապրանքային նշանի հայտի հրապարակման օրվանից հետո ծագած հիմքերով, որոնք վկայակոչելը ապրանքային նշանի գրանցման հրապարակումից հետո կարգելվեի այդ հրապարակման ուժով: Գործը վարույթ ընդունած դատարանը չի կարող գործն ըստ էության լուծող որոշում կայացնել նախքան ապրանքային նշանի գրանցման հրապարակումը:

Հոդված 10

Համայնքի ապրանքային նշանների վերարտադրությունը բառարաններում

Եթե բառարանում, հանրագիտարանում կամ նմանատիպ տեղեկագրքում Համայնքի ապրանքային նշանի վերարտադրությունն այնպիսի տպավորություն է թողնում, որ այն հանդիսանում է այն ապրանքների կամ ծառայությունների տեսակային անվանումը, որոնց համար գրանցվել է ապրանքային նշանը, հրատարակիչը, Համայնքի ապրանքային նշանի սեփականատիրոջ պահանջով, ապահովում է, որպեսզի ամենաուշը հաջորդ հրատարակությունում ապրանքային նշանի վերարտադրության հետ նշվի, որ այն գրանցված ապրանքային նշան է:

Հոդված 11

Ապրանքային նշանի սեփականատիրոջ գործակալի կամ ներկայացուցչի անունով գրանցված Համայնքի ապրանքային նշանի օգտագործման արգելքը

Եթե Համայնքի ապրանքային նշանը գրանցված է այդ ապրանքային նշանի սեփականատեր հանդիսացող անձի գործակալի կամ ներկայացուցչի անունով առանց սեփականատիրոջ թույլտվության, վերջինս իրավունք ունի առարկելու իր գործակալի կամ ներկայացուցչի կողմից իր նշանի օգտագործմանը, եթե նա չի թույլատրել այդ օգտագործումը՝ բացառությամբ, եթե գործակալը կամ ներկայացուցիչը հիմնավորում է իր գործողությունը:

Հոդված 12

Համայնքի ապրանքային նշանի գործողության սահմանափակումը

Համայնքի ապրանքային նշանը դրա սեփականատիրոջն իրավունք չի վերապահում երրորդ անձանց արգելելու առևտրային գործունեության ընթացքում օգտագործել

ա) նրանց անվանումը (անունը) կամ հասցեն.

բ) ապրանքի կամ ծառայության տեսակի, որակի, քանակի, նպատակային նշանակության, արժեքի, աշխարհագրական ծագման, ինչպես նաև ապրանքի արտադրման կամ ծառայությունների մատուցման ժամանակի և ապրանքների կամ ծառայությունների այլ հատկությունների վերաբերյալ նշումները.

գ) ապրանքային նշանը, եթե դա անհրաժեշտ է ապրանքի կամ ծառայության նպատակային նշանակությունը նշելու համար, մասնավորապես՝ որպես պատկանելիքներ կամ պահեստային մասեր՝ պայմանով, որ նա օգտագործում է դրանք՝ արդյունաբերական կամ առևտրային հարցերում ազնիվ գործելակերպին համապատասխան:

Հոդված 13

Համայնքի ապրանքային նշանով վերապահվող իրավունքների դադարումը

1. Համայնքի ապրանքային նշանը դրա սեփականատիրոջն իրավունք չի վերապահում արգելելու դրա օգտագործումն այնպիսի ապրանքների նկատմամբ, որոնք այդ ապրանքային նշանի ներքո Համայնքում շուկայահանվել են ապրանքային նշանի սեփականատիրոջ կողմից կամ նրա համաձայնությամբ:

2. 1-ին պարբերությունը չի կիրառվում, եթե սեփականատերն ունի օրինական հիմքեր արգելելու ապրանքների հետագա առևտրայնացումը, հատկապես եթե ապրանքների վիճակը դրանք վաճառքի հանելուց հետո փոխվել կամ վատթարացել է:

Հոդված 14

Ապրանքային նշանի ապօրինի օգտագործմանը վերաբերող ներպետական իրավունքի լրացուցիչ կիրառումը

1. Համայնքի ապրանքային նշանների գործողությունը կարգավորվում է բացառապես սույն Կանոնակարգի դրույթներով: Այլ առումներով, Համայնքի ապրանքային նշանի ապօրինի օգտագործումը կարգավորվում է ազգային ապրանքային նշանի ապօրինի օգտագործման վերաբերյալ ներպետական իրավունքով՝ 10-րդ բաժնի դրույթներին համապատասխան:

2. Սույն Կանոնակարգը չի արգելում Համայնքի ապրանքային նշանի վերաբերյալ հայցերի հարուցումը անդամ պետությունների՝ մասնավորապես քաղաքացիական պատասխանատվությանը և անարդար մրցակցությանը վերաբերող իրավական նորմերի համաձայն:

3. Կիրառվելիք ընթացակարգային կանոնները որոշվում են 10-րդ բաժնի դրույթներին համապատասխան:

ՄԱՍ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Հոդված 15

Համայնքի ապրանքային նշանների օգտագործումը

1. Եթե ապրանքային նշանի գրանցմանը հաջորդող հինգ տարվա ընթացքում ապրանքային նշանի սեփականատերը իրապես չի օգտագործել Համայնքի ապրանքային նշանն այն ապրանքների կամ ծառայությունների նկատմամբ, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը, կամ եթե դրա օգտագործումը կասեցվել է հինգ տարի շարունակ, Համայնքի ապրանքային նշանի սեփականատիրոջ նկատմամբ կիրառվում են սույն Կանոնակարգով նախատեսված պատժամիջոցներ՝ բացառությամբ եթե սեփականատերն այն չօգտագործելու պատշաճ հիմքեր է ներկայացնում:

2. 1-ին պարբերության իմաստով «օգտագործում» նաև նշանակում է՝

ա) Համայնքի ապրանքային նշանի օգտագործումն այնպիսի ձևով, որը տարբերվում է գրանցվածից՝ ապրանքային նշանի տարբերակիչ հատկանիշը չփոփոխող տարբերով.

բ) Համայնքի ապրանքային նշանի զետեղումը ապրանքների կամ դրանց փաթեթավորման վրա՝ բացառապես արտահանման նպատակներով:

3. Համայնքի ապրանքային նշանի օգտագործումը դրա սեփականատիրոջ համաձայնությամբ համարվում է օգտագործում սեփականատիրոջ կողմից:

ՄԱՍ 4

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ

Հոդված 16

Համայնքի ապրանքային նշանները ազգային ապրանքային նշաններ համարելը

1. Եթե այլ բան նախատեսված չէ 17-24-րդ հոդվածներով, Համայնքի ապրանքային նշանը՝ որպես սեփականության օբյեկտ, ամբողջությամբ և Համայնքի ողջ տարածքի առումով համարվում է այն անդամ պետությունում գրանցված ազգային ապրանքային նշան, որտեղ, Համայնքի ապրանքային նշանների գրանցամատյանի համաձայն՝

ա) համապատասխան թվականին սեփականատիրոջ կառավարման կամ բնակության (գտնվելու) վայրն է կամ,

բ) եթե «ա» ենթապարբերությունը չի կիրառվում, համապատասխան թվականին սեփականատիրոջ տնտեսական գործունեության իրականացման վայրն է:

2. 1-ին պարբերությամբ չնախատեսված դեպքերում, այդ պարբերությունում նշված անդամ պետությունը կլինի այն անդամ պետությունը, որտեղ Գրասենյակի նստավայրն է:

3. Եթե Համայնքի ապրանքային նշանների գրանցամատյանում երկու կամ ավելի անձինք նշված են որպես ապրանքային նշանի համասեփականատերեր, 1-ին պարբերությունը

կիրառվում է առաջինը նշված համասեփականատիրոջ նկատմամբ. հակառակ դեպքում, այն կիրառվում է հաջորդող համասեփականատերերի նկատմամբ այն հերթականությամբ, որով նրանք նշված են: Եթե 1-ին պարբերությունը չի կիրառվում համասեփականատերերից որևէ մեկի նկատմամբ, կիրառվում է 2-րդ պարբերությունը:

Հոդված 17

Ապրանքային նշանի փոխանցումը

1. Համայնքի ապրանքային նշանը կարող է փոխանցվել պարտավորության ցանկացած փոխանցումից առանձին՝ որոշ կամ բոլոր այն ապրանքների կամ ծառայությունների մասով, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը:

2. Ամբողջ պարտավորության փոխանցումը ներառում է Համայնքի ապրանքային նշանի փոխանցումը, բացառությամբ, եթե, փոխանցումը կարգավորող իրավական ակտերին համապատասխան, առկա է այլ համաձայնություն կամ հանգամանքները հստակորեն այլ բան են թելադրում: Սույն դրույթը կիրառվում է պարտավորությունը փոխանցելու պայմանագրային պարտավորության նկատմամբ:

3. Չսահմանափակելով 2-րդ պարբերության գործողությունը՝ Համայնքի ապրանքային նշանի փոխանցումը կատարվում է գրավոր և պահանջում է պայմանագրի կողմերի ստորագրությունը, բացառությամբ եթե այն բխում է դատարանի վճռից. սույն պահանջների չկատարումը փոխանցումը դարձնում է առոչինչ:

4. Եթե փոխանցման փաստաթղթերից պարզ է դառնում, որ փոխանցման արդյունքում հնարավոր է, որ Համայնքի ապրանքային նշանը մոլորության մեջ գցի հանրությանն այն ապրանքների կամ ծառայությունների բնույթի, որակի կամ աշխարհագրական ծագման վերաբերյալ, որոնց համար գրանցվել է ապրանքային նշանը, Գրասենյակը չի գրանցում փոխանցումը, բացառությամբ, եթե իրավահաջորդը համաձայնում է Համայնքի ապրանքային նշանի գրանցումը սահմանափակել այն ապրանքներով կամ ծառայություններով, որոնց մասով հանրությանը մոլորության մեջ գցելու հավանականություն չկա:

5. Կողմերից մեկի դիմումի համաձայն փոխանցումը գրանցվում է գրանցամատյանում և հրապարակվում:

6. Իրավահաջորդը չի կարող վկայակոչել Համայնքի ապրանքային նշանի հայտի գրանցումից բխող իրավունքները, քանի դեռ փոխանցումը չի գրանցվել գրանցամատյանում:

7. Գրասենյակի հետ առնչվող ժամկետների պահպանման անհրաժեշտության դեպքում՝ իրավահաջորդը կարող է Գրասենյակ ներկայացնել համապատասխան փաստաթղթերը՝ վերջինիս կողմից փոխանցումը գրանցելու դիմումը ստանալուն պես:

8. Բոլոր փաստաթղթերը, որոնց մասին պետք է 77-րդ հոդվածին համապատասխան ծանուցվի Համայնքի ապրանքային նշանի սեփականատերը, պետք է հասցեագրվեն որպես սեփականատեր գրանցված անձին:

Հոդված 18

Սեփականատիրոջ գործակալի անունով գրանցված ապրանքային նշանի փոխանցումը

Եթե Համայնքի ապրանքային նշանը գրանցված է ապրանքային նշանի սեփականատեր հանդիսացող անձի գործակալի կամ ներկայացուցչի անունով առանց սեփականատիրոջ թույլտվության, վերջինս իրավունք ունի պահանջել նշված ապրանքային նշանի վերագրանցումն իր անունով, բացառությամբ, եթե գործակալը կամ ներկայացուցիչը հիմնավորում է իր գործողությունները:

Հոդված 19

Գույքային իրավունքները

1. Համայնքի ապրանքային նշանը կարող է, պարտավորությունից անկախ, տրամադրվել որպես պարտավորությունների ապահովման միջոց և լինել գույքային իրավունքի օբյեկտ:
2. Կողմերից մեկի դիմումի համաձայն 1-ին պարբերությունում նշված իրավունքները գրանցվում են գրանցամատյանում և հրապարակվում:

Հոդված 20

Բռնագանձում տարածելը

1. Համայնքի ապրանքային նշանի վրա կարող է բռնագանձում տարածվել:
2. 16-րդ հոդվածի համաձայն որոշված անդամ պետությունների դատարաններն ու մարմինները Համայնքի ապրանքային նշանի վրա բռնագանձում տարածելու բացառիկ իրավասություն ունեն:
3. Կողմերից մեկի դիմումի համաձայն բռնագանձում տարածելը գրանցվում է գրանցամատյանում և հրապարակվում:

Հոդված 21

Սնանկության և նմանատիպ վարույթները

1. Մինչև այս ոլորտում անդամ պետությունների համար ընդհանուր կանոններն ուժի մեջ մտնելը միակ անդամ պետությունը, որտեղ Համայնքի ապրանքային նշանը կարող է ընդգրկվել սնանկության կամ նմանատիպ վարույթներում, այն պետությունն է, որտեղ նման վարույթներն առաջինն են հարուցվում՝ այս ոլորտում կիրառվող ներպետական իրավունքի կամ կոնվենցիաների իմաստով:
2. Եթե Համայնքի ապրանքային նշանը ներգրավվում է սնանկության կամ նմանատիպ այլ վարույթներում՝ իրավասու ներպետական մարմնի դիմումի համաձայն այդ մասին գրառում է կատարվում գրանցամատյանում, և այդ փաստը հրապարակվում է:

Հոդված 22

Լիցենզավորումը

1. Համայնքի ապրանքային նշանի օգտագործումը կարող է թույլատրվել լիցենզիայի հիման վրա որոշ կամ բոլոր ապրանքների կամ ծառայությունների մասով, որոնց համար այն գրանցվել է, ինչպես նաև ողջ Համայնքի կամ դրա մի մասի համար: Լիցենզիան կարող է լինել բացառիկ կամ հասարակ (ոչ բացառիկ):

2. Համայնքի ապրանքային նշանի սեփականատերը կարող է վկայակոչել այդ ապրանքային նշանով իրեն վերապահված իրավունքները այն լիցենզատուի դեմ, որը խախտում է իր կողմից կնքված լիցենզային պայմանագրի որևէ դրույթ՝ կապված լիցենզիայի գործողության ժամկետի, ապրանքային նշանի՝ գրանցմամբ նախատեսված օգտագործման ձևի, այն ապրանքների կամ ծառայությունների շրջանակի, որոնց համար տրամադրվել է լիցենզիան, ապրանքային նշանը զետեղելու համար նախատեսված տարածքի կամ լիցենզատուի կողմից արտադրվող ապրանքների, կամ տրամադրվող ծառայությունների որակի հետ:

3. Չսահմանափակելով լիցենզային պայմանագրի դրույթների գործողությունը՝ լիցենզատուն կարող է Համայնքի ապրանքային նշանի ապօրինի օգտագործման վերաբերյալ վարույթ հարուցել միայն ապրանքային նշանի սեփականատիրոջ համաձայնությամբ: Այնուամենայնիվ, բացառիկ լիցենզիայի սեփականատերը կարող է նման վարույթ հարուցել, եթե ապրանքային նշանի սեփականատերը, պաշտոնական ծանուցումից հետո, համապատասխան ժամկետում ապրանքային նշանի ապօրինի օգտագործման վերաբերյալ վարույթ չի հարուցում:

4. Լիցենզատուն, իրեն հասցված վնասի փոխհատուցում ստանալու նպատակով, իրավունք ունի միջամտելու Համայնքի ապրանքային նշանի ապօրինի օգտագործման վերաբերյալ դրա սեփականատիրոջ կողմից հարուցված վարույթին:

5. Կողմերից մեկի դիմումի համաձայն Համայնքի ապրանքային նշանի փոխանցումը կամ դրա օգտագործման լիցենզիայի տրամադրումը գրանցվում է գրանցամատյանում և հրապարակվում:

Հոդված 23

Գործողությունը երրորդ անձանց նկատմամբ

1. 17-րդ, 19-րդ և 22-րդ հոդվածներում նշված՝ Համայնքի ապրանքային նշանի վերաբերյալ իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունները բոլոր անդամ պետություններում երրորդ անձանց համար իրավական հետևանքներ առաջացնում են դրանք գրանցամատյանում գրանցելուց հետո միայն: Այնուամենայնիվ, նախքան նման գործողությունների՝ գրանցամատյանում այդպես գրանցվելը, դրանք իրավական հետևանքներ են առաջացնում այն երրորդ անձանց համար, որոնք ապրանքային նշանի նկատմամբ իրավունքներ ձեռք են բերել այդ գործողության կատարման օրվանից հետո, սակայն որոնք տեղյակ են եղել այդ գործողության մասին իրավունքների ձեռքբերման օրը:

2. 1-ին պարբերությունը չի կիրառվում այն անձանց նկատմամբ, ովքեր Համայնքի ապրանքային նշան կամ Համայնքի ապրանքային նշանի նկատմամբ իրավունք ձեռք են բերում ամբողջ պարտավորության փոխանցման կամ ցանկացած այլ համապարփակ իրավահաջորդության միջոցով:

3. Երրորդ անձանց համար 20-րդ հոդվածում նշված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների հետևանքները կարգավորվում են 16-րդ հոդվածի համաձայն որոշվող անդամ պետության իրավունքով:

4. Մինչև սնանկության ոլորտում անդամ պետությունների համար ընդհանուր կանոններն ուժի մեջ մտնելը, երրորդ անձանց համար սնանկության կամ նմանատիպ վարույթների հետևանքները կարգավորվում են այն անդամ պետության իրավունքով, որտեղ նման վարույթն առաջինն է հարուցվում՝ ներպետական իրավունքի կամ այս ոլորտում կիրառվող կոնվենցիաների իմաստով:

Հոդված 24

Համայնքի ապրանքային նշանի՝ որպես սեփականության օբյեկտի հայտը

16-23-րդ հոդվածները կիրառվում են Համայնքի ապրանքային նշանների հայտերի նկատմամբ:

ԲԱԺԻՆ III. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՅՏԸ

ՄԱՍ 1

ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ԵՎ ԴՐԱՆՔ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հոդված 25

Հայտեր ներկայացնելը

1. Համայնքի ապրանքային նշանի հայտը հայտատուի ընտրությամբ ներկայացվում է՝

ա) Գրասենյակ կամ

բ) անդամ պետության արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակ, կամ Բենիյուքսի ապրանքային նշանների հարցերով գրասենյակ: Այսպիսով ներկայացված հայտը առաջացնում է նույն հետևանքները, ինչ նույն թվականին Գրասենյակ ներկայացված հայտը:

2. Եթե հայտը ներկայացվում է անդամ պետության արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակ կամ Բենիյուքսի ապրանքային նշանների հարցերով գրասենյակ, այդ գրասենյակը ձեռնարկում է բոլոր քայլերը՝ հայտը ներկայացնելուց հետո երկու շաբաթվա ընթացքում այն Գրասենյակ ուղարկելու համար: Այն կարող է հայտատուից տուրք զանձել, որը չպետք է գերազանցի հայտը ստանալու և Գրասենյակ ուղարկելու համար կատարված վարչական ծախսերի չափը:

3. 2-րդ պարբերությունում նշված հայտերը, որոնք Գրասենյակը ստանում է դրանք ներկայացնելուց հետո ավելի քան մեկ ամսվա ընթացքում, համարվում են հետկանչված:

4. Սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց 10 տարի հետո Հանձնաժողովը կազմում է Համայնքի ապրանքային նշանների հայտեր ներկայացնելու համակարգի աշխատանքի

վերաբերյալ զեկույց՝ այդ համակարգը փոփոխելուն ուղղված ցանկացած առաջարկի հետ միասին:

Հոդված 26

Հայտերը ներկայացնելու պայմանները

1. Համայնքի ապրանքային նշանի հայտը պետք է պարունակի՝

ա) Համայնքի ապրանքային նշան գրանցելու դիմում.

բ) հայտատուին նույնականացնող տեղեկություններ.

գ) ապրանքների կամ ծառայությունների ցանկը, որոնց համար խնդրարկվում է գրանցումը.

դ) ապրանքային նշանի պատկերը:

2. Համայնքի ապրանքային նշանի հայտը ներկայացնելու համար գանձվում է հայտը ներկայացնելու համար սահմանված տուրք և, անհրաժեշտության դեպքում, ապրանքների կամ ծառայությունների մեկ կամ ավելի դասերի համար սահմանված տուրքեր:

3. Համայնքի ապրանքային նշանի հայտը պետք է համապատասխանի 140-րդ հոդվածում նշված Կիրարկող կանոնակարգով սահմանված պայմաններին:

Հոդված 27

Հայտը ներկայացնելու թվականը

Համայնքի ապրանքային նշանի հայտը ներկայացնելու թվականը այն թվականն է, երբ հայտատուն հոդված 26«1»-ով սահմանված տեղեկությունները պարունակող փաստաթղթերը ներկայացնում է Գրասենյակ, կամ եթե հայտը ներկայացվել է անդամ պետության կենտրոնական գրասենյակ կամ Բենիլյուքսի ապրանքային նշանների հարցերով գրասենյակ՝ այդ գրասենյակ ներկայացնելու թվականը՝ նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում հայտը ներկայացնելու համար տուրքի վճարման պայմանով:

Հոդված 28

Ապրանքների և ծառայությունների դասակարգումը

Ապրանքները և ծառայությունները, որոնց համար հայտարկվում է Համայնքի ապրանքային նշանը, դասակարգվում են Կիրարկող կանոնակարգում նշված դասակարգման համակարգին համապատասխան:

Հոդված 29

Առաջնության իրավունքը

1. Այն անձը, որը սահմանված կարգով Փարիզի կոնվենցիայի մասնակից պետությունում կամ այդ պետությունում պահպանության համար ապրանքային նշանի հայտ է ներկայացրել, ինչպես նաև նրա իրավահաջորդները նույն ապրանքային նշանի համար այն ապրանքների կամ ծառայությունների մասով Համայնքի ապրանքային նշանի հայտ ներկայացնելու նպատակով, որոնք նույնական են կամ ներառված են այն ապրանքների կամ ծառայությունների ցանկում, որոնց համար ներկայացվել է ապրանքային նշանի հայտը, ունեն առաջնության իրավունք՝ առաջին հայտը ներկայացնելու թվականից հետո 6 ամսվա ընթացքում:

2. Հայտի յուրաքանչյուր ներկայացում, որը համարժեք է հայտերի՝ սահմանված կարգով ներպետական ներկայացմանը՝ համաձայն այն պետության ներպետական իրավունքի, որտեղ այն ներկայացվել է, կամ համաձայն երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի, ճանաչվում է որպես առաջնության իրավունքի հիմք հանդիսացող ներկայացում:

3. Հայտի՝ սահմանված կարգով ներպետական ներկայացում նշանակում է ցանկացած ներկայացում, որը բավարար է հայտը ներկայացնելու թվականը որոշելու համար՝ անկախ հայտի արդյունքից:

4. Նույն ապրանքների կամ ծառայությունների համար նախորդ առաջին հայտի առարկա հանդիսացող ապրանքային նշանի հաջորդ հայտը, որը ներկայացվել է նույն պետությունում կամ այդ պետությունում պահպանության համար, առաջնության որոշման նպատակներով համարվում է առաջին հայտ՝ պայմանով, որ հաջորդ հայտը ներկայացնելու թվականին նախորդ հայտը, առանց հանրության կողմից ուսումնասիրման համար մատչելի դառնալու և բոլոր իրավունքների դադարեցմամբ, հետ է կանչվել, մերժվել է կամ դրանից հրաժարվել են և չի ծառայել որպես առաջնության իրավունքի խնդրարկման հիմք: Նախորդ հայտը այդուհետ չի կարող ծառայել որպես առաջնության իրավունքի խնդրարկման հիմք:

5. Եթե առաջին հայտը ներկայացվել է մի պետությունում, որը Փարիզի կոնվենցիայի մասնակից պետություն չէ, 1-4-րդ պարբերությունները կիրառվում են միայն այնքանով, որքանով այդ պետությունը, հրապարակված տվյալների համաձայն, Գրասենյակ ներկայացված առաջին հայտի հիման վրա և սույն Կանոնակարգով սահմանված պայմաններին համարժեք պայմանների պահպանմամբ, շնորհում է հավասարազոր առաջնության իրավունք:

Հոդված 30

Առաջնության խնդրարկումը

Հայտատուն, որը ցանկանում է օգտվել նախորդ հայտի առաջնության իրավունքից, ներկայացնում է առաջնության մասին հայտարարություն և նախորդ հայտի պատճենը: Եթե

վերջինս Գրասենյակի կողմից գործածվող լեզուներից որևէ մեկով չէ, հայտատուն ներկայացնում է նախորդ հայտի թարգմանությունը այդ լեզուներից մեկով:

Հոդված 31

Առաջնության իրավունքի ազդեցությունը

Առաջնության իրավունքի ուժով Համայնքի ապրանքային նշանի հայտը ներկայացնելու թվական է համարվում առաջնության թվականը՝ գերակա իրավունքը որոշելու նպատակով:

Հոդված 32

Համայնքի ապրանքային նշանի հայտի ներկայացմանը հավասարեցված ներպետական ներկայացումը

Համայնքի ապրանքային նշանի հայտը, որի համար ներկայացման թվական է սահմանվել, հավասարեցվում է անդամ պետություններում սահմանված կարգով ներպետական ներկայացմանը՝ անհրաժեշտության դեպքում, Համայնքի ապրանքային նշանի հայտի համար խնդրարկված առաջնությամբ:

ՄԱՍ 3

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 33

Ցուցահանդեսային առաջնությունը

1. Եթե 1928 թվականի նոյեմբերի 22-ին Փարիզում ստորագրված և վերջին անգամ 1972 թվականի նոյեմբերի 30-ին վերանայված՝ «Միջազգային ցուցահանդեսների մասին» կոնվենցիայի պայմանների շրջանակներում անցկացվող պաշտոնական կամ պաշտոնապես ճանաչված միջազգային ցուցահանդեսի ժամանակ Համայնքի ապրանքային նշանի հայտատուն հայտարկվող նշանի ներքո ցուցադրել է ապրանքներ կամ ծառայություններ, նա կարող է, հայտարկվող նշանի ներքո ապրանքների կամ ծառայությունների առաջին ցուցադրման թվականից հետո 6 ամսվա ընթացքում հայտը ներկայացնելու դեպքում, այդ թվականից սկսած պահանջել առաջնության իրավունք՝ 31-րդ հոդվածի իմաստով:

2. Հայտատուն, որը ցանկանում է 1-ին պարբերությանը համապատասխան առաջնության իրավունք պահանջել, պետք է ապացույց ներկայացնի, որ հայտարկվող նշանի ներքո ներկայացված ապրանքները կամ ծառայությունները ցուցադրվել են Կիրարկող կանոնակարգով սահմանված պայմանների համաձայն:

3. Անդամ պետությունում կամ երրորդ երկրում շնորհված ցուցահանդեսային առաջնությամբ 29-րդ հոդվածով սահմանված առաջնության ժամկետը չի երկարաձգվում:

Հոդված 34

Ազգային ապրանքային նշանի գլխավորության խնդրարկումը

1. Անդամ պետությունում, այդ թվում՝ Բենիլյուքսի երկրներում կամ անդամ պետությունում գործող միջազգային համաձայնագրերի համաձայն գրանցված ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանի սեփականատերը, որը նույնական ապրանքային նշանը որպես Համայնքի ապրանքային նշան գրանցելու հայտ է ներկայացնում այն ապրանքների կամ ծառայությունների համար, որոնք նույնական են այն ապրանքներին կամ ծառայություններին կամ ներառված դրանց ցանկում, որոնց համար գրանցվել է ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանը, կարող է Համայնքի ապրանքային նշանի համար պահանջել ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանի գլխավորությունը այն անդամ պետության մասով, որտեղ կամ որի համար այն գրանցվել է:

2. Սույն Կանոնակարգի համաձայն գլխավորության միակ հետևանքն այն է, որ եթե Համայնքի ապրանքային նշանի սեփականատերը զիջում է ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանը կամ թույլ է տալիս, որ դրա գործողության ժամկետը լրանա, համարվում է, որ նա դեռ ունի նույն իրավունքները, ինչ կունենար, եթե ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանը դեռ գրանցված լիներ:

3. Համայնքի ապրանքային նշանի համար խնդրարկված գլխավորության գործողությունը դադարում է, եթե ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանը, որի համար խնդրարկվել է գլխավորությունը, ճանաչվում է չեղյալ հայտարարված կամ անվավեր, կամ եթե այն զիջվում է Համայնքի ապրանքային նշանի գրանցումից առաջ:

Հոդված 35

Գլխավորության խնդրարկումը Համայնքի ապրանքային նշանի գրանցումից հետո

1. Համայնքի ապրանքային նշանի սեփականատերը, որը նույնական ապրանքների կամ ծառայությունների համար անդամ պետությունում, այդ թվում՝ Բենիլյուքսի երկրներում կամ անդամ պետությունում գործող միջազգային համաձայնագրերի համաձայն գրանցված ապրանքային նշանի սեփականատերն է, կարող է պահանջել ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանի գլխավորությունը այն անդամ պետության մասով, որտեղ կամ որի համար գրանցվել է ապրանքային նշանը:

2. Կիրառվում են հոդված 34«2»-ը և «3»-ը:

ՄԱՍ 1

ՀԱՅՏԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 36

Հայտը ներկայացնելու պայմանների պահպանման ստուգումը

1. Գրասենյակն ստուգում է, թե արդյո՞ք՝

ա) Համայնքի ապրանքային նշանի հայտը բավարարում է հայտը ներկայացնելու թվականը՝ 27-րդ հոդվածին համապատասխան սահմանելու պահանջները.

բ) Համայնքի ապրանքային նշանի հայտը բավարարում է Կիրարկող կանոնակարգով սահմանված պայմանները.

գ) ըստ անհրաժեշտության, ապրանքների դասերի համար վճարվող տուրքերը վճարվել են սահմանված ժամկետում:

2. Եթե Համայնքի ապրանքային նշանի հայտը չի բավարարում 1-ին պարբերությունում նշված պահանջները, Գրասենյակը հայտատուից պահանջում է սահմանված ժամկետում վերացնել թերությունները կամ կատարել վճարները:

3. Եթե պարբերություն 1«ա»-ի համաձայն սահմանված թերությունները չեն վերացվում կամ վճարները չեն կատարվում սահմանված ժամկետում, հայտը չի քննվում որպես Համայնքի ապրանքային նշանի հայտ: Եթե հայտատուն բավարարում է Գրասենյակի պահանջները, Գրասենյակը որպես հայտը ներկայացնելու թվական է սահմանում այն օրը, երբ թերությունները վերացվում են կամ վճարները կատարվում:

4. Եթե պարբերություն 1«բ»-ի համաձայն սահմանված թերությունները չեն վերացվում սահմանված ժամկետում, Գրասենյակը մերժում է հայտը:

5. Եթե պարբերություն 1«գ»-ի համաձայն սահմանված վճարների հետ կապված թերությունները չեն վերացվում սահմանված ժամկետում, ապա հայտը համարվում է հետկանչված, բացառությամբ եթե պարզ է դառնում, թե վճարված գումարը ապրանքների կամ ծառայությունների որ խմբի համար է նախատեսված:

6. Եթե հայտատուն չի բավարարում առաջնության խնդրարկման պահանջները, նա զրկվում է հայտի առաջնության իրավունքից:

7. Եթե հայտատուն չի բավարարում ազգային ապրանքային նշանի գլխավորության խնդրարկման պայմանները, նա զրկվում է հայտի գլխավորության իրավունքից:

Հողված 37

Ապրանքային նշանի սեփականատեր լինելու իրավունակության վերաբերյալ պայմանների ուսումնասիրությունը

1. Եթե 5-րդ հոդվածի համաձայն հայտատուն չի կարող լինել Համայնքի ապրանքային նշանի սեփականատեր, հայտը մերժվում է:
2. Հայտը չի կարող մերժվել, քանի դեռ հայտատուին իր հայտը հետ կանչելու կամ իր դիտողությունները ներկայացնելու հնարավորություն չի ընձեռվել:

Հողված 38

Մերժման բացարձակ հիմքերի ուսումնասիրությունը

1. Եթե, 7-րդ հոդվածի համաձայն, ապրանքային նշանը Համայնքի ապրանքային նշանի հայտում ներառված որոշ կամ բոլոր ապրանքների կամ ծառայությունների համար չի բավարարում գրանցման համար անհրաժեշտ պայմանները, հայտը մերժվում է՝ այդ ապրանքների կամ ծառայությունների մասով:
2. Եթե ապրանքային նշանը տարբերակիչ հատկանիշ չունեցող տարր է պարունակում, և եթե նշված տարրի ներառումը ապրանքային նշանում կարող է կասկած հարուցել ապրանքային նշանի պահպանության շրջանակի առումով, Գրասենյակը, որպես նշված ապրանքային նշանի գրանցման պայման, կարող է պահանջել, որ հայտատուն նշի, որ հրաժարվում է նշված տարրի նկատմամբ ցանկացած բացառիկ իրավունքից: Հայտատուի՝ բացառիկ իրավունքից հրաժարումը հրապարակվում է հայտի կամ Համայնքի ապրանքային նշանի գրանցման հետ միասին՝ կախված հանգամանքներից:
3. Հայտը չի մերժվում, քանի դեռ հայտատուին իր հայտը հետ կանչելու, այն փոփոխելու կամ իր դիտողությունները ներկայացնելու հնարավորություն չի ընձեռվել:

ՄԱՍ 2

ՈՐՈՆՈՒՄԸ

Հողված 39

Որոնումը

1. Գրասենյակը, Համայնքի ապրանքային նշանի հայտը ներկայացնելու թվականը սահմանելուց, ինչպես նաև հաստատելուց հետո, որ հայտատուն բավարարում է 5-րդ հոդվածում նշված պայմանները, կազմում է Համայնքում կատարված որոնման վերաբերյալ հաշվետվություն, որտեղ նշվում են բացահայտված ավելի վաղ առաջնությամբ Համայնքի ապրանքային այն նշանները կամ Համայնքի ապրանքային նշանի այն հայտերը, որոնք 8-րդ հոդվածի համաձայն կարող են վկայակոչվել հայտարկվող Համայնքի ապրանքային նշանի գրանցման դեմ:
2. Համայնքի ապրանքային նշանի հայտը ներկայացնելու թվականը սահմանելուն պես՝ Գրասենյակը դրա մեկ օրինակը փոխանցում է յուրաքանչյուր անդամ պետության

արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակ, որը Գրասենյակին տեղեկացրել է ապրանքային նշանների իր գրանցամատյանում՝ Համայնքի ապրանքային նշանի հայտերի առնչությամբ որոնում կատարելու իր որոշման մասին:

3. 2-րդ պարբերությունում նշված արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակներից յուրաքանչյուրը Համայնքի ապրանքային նշանի հայտը ստանալու թվականից հետո երեք ամսվա ընթացքում Գրասենյակ է ներկայացնում որոնման վերաբերյալ հաշվետվություն, որտեղ նշվում են բացահայտված այն ավելի վաղ առաջնությամբ ներպետական ապրանքային նշանները կամ ապրանքային նշանների հայտերը, որոնք կարող են 8-րդ հոդվածի համաձայն վկայակոչվել հայտարկվող Համայնքի ապրանքային նշանի գրանցման դեմ, կամ նշում են, որ որոնման արդյունքում նման իրավունքներ չեն հայտնաբերվել:

4. Գրասենյակը յուրաքանչյուր արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակին որոշակի գումար է վճարում՝ վերջինիս կողմից որոնման վերաբերյալ 3-րդ պարբերության համաձայն տրամադրված յուրաքանչյուր հաշվետվության համար: Գումարի չափը, որը պետք է նույնը լինի յուրաքանչյուր գրասենյակի համար, սահմանվում է Բյուջետային հարցերով կոմիտեի կողմից՝ անդամ պետությունների ներկայացուցիչների երեք քառորդ մեծամասնության կողմից ընդունված որոշմամբ:

5. Գրասենյակն անհապաղ Համայնքի ապրանքային նշանի հայտատուին է փոխանցում Համայնքում կատարված որոնման վերաբերյալ հաշվետվությունը և պետությունում կատարված որոնման վերաբերյալ հաշվետվությունները՝ 3-րդ պարբերությամբ սահմանված ժամկետում:

6. Համայնքի ապրանքային նշանի հայտը հրապարակելիս, որը չի կարող իրականացվել նախքան Գրասենյակի կողմից հայտատուին որոնման հաշվետվությունների տրամադրման թվականից հետո մեկ ամիսը լրանալը, Գրասենյակը Համայնքի ապրանքային նշանի հայտի հրապարակման մասին տեղեկացնում է Համայնքում կատարված որոնման վերաբերյալ հաշվետվության մեջ նշված՝ Համայնքի ցանկացած ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանների սեփականատերերին և Համայնքի ապրանքային նշանի հայտատուներին:

7. Հանձնաժողովը հայտերի ընդունման նպատակով Գրասենյակի ստեղծումից հինգ տարի հետո Խորհրդին է ներկայացնում սույն հոդվածից բխող որոնման համակարգի աշխատանքի, այդ թվում՝ 4-րդ պարբերության համաձայն անդամ պետություններին տրամադրվող վճարների վերաբերյալ զեկույց, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, սույն Կանոնակարգը փոփոխելու վերաբերյալ համապատասխան առաջարկներ՝ հաշվի առնելով որոնման միջոցների զարգացումները և նպատակ ունենալով ձեռք բերված փորձի հիման վրա հարմարեցնել որոնման համակարգը:

ՄԱՍ 3

ՀԱՅՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

Հոդված 40

Հայտի հրապարակումը

1. Եթե Համայնքի ապրանքային նշանի հայտը ներկայացնելու համար սահմանված պայմանները բավարարվել են, և եթե հոդված 39«6»-ում նշված ժամկետը լրացել է, հայտը հրապարակվում է, եթե այն չի մերժվել 37-րդ և 38-րդ հոդվածներին համապատասխան:
2. Եթե հրապարակումից հետո հայտը մերժվում է 37-րդ և 38-րդ հոդվածների համաձայն, մերժման վերաբերյալ որոշումը հրապարակվում է վերջնական դառնալուն պես:

ՄԱՍ 4

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 41

Երրորդ անձանց դիտողությունները

1. Համայնքի ապրանքային նշանի հայտը հրապարակելուց հետո ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ և արդյունաբերողներին, արտադրողներին, ծառայություններ մատուցողներին, առևտրականներին կամ սպառողներին ներկայացնող ցանկացած խումբ կամ մարմին կարող է իր գրավոր դիտողությունները ներկայացնել Գրասենյակ՝ բացատրելով այն հիմքերը, որոնց հիման վրա, մասնավորապես 7-րդ հոդվածի համաձայն, ապրանքային նշանի գրանցումը պետք է մերժվի ի պաշտոնե (ex officio): Նրանք Գրասենյակում իրականացվող վարույթի կողմ չեն հանդիսանում:
2. 1-ին պարբերությունում նշված դիտողությունները հաղորդվում են հայտատուին, որը կարող է դրանց վերաբերյալ ներկայացնել իր մեկնաբանությունները:

Հոդված 42

Առարկությունը

1. Ապրանքային նշանի գրանցման՝ 8-րդ հոդվածի համաձայն անթույլատրելիության հիմքով ապրանքային նշանի գրանցմանը առարկելու մասին ծանուցումը Համայնքի ապրանքային նշանի հայտը հրապարակելուց հետո 3 ամսվա ընթացքում կարող է ներկայացվել.
 - ա) հոդված 8«2»-ում նշված ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանների սեփականատերերի, ինչպես նաև նշված ապրանքային նշանների սեփականատերերի կողմից հոդված 8«1»-ի և «5»-ի մասով լիազորված լիզենցատուների կողմից.
 - բ) հոդված 8«3»-ում նշված ապրանքային նշանների սեփականատերերի կողմից.

զ) հողված 8«4»-ում նշված ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանների կամ այլ նշանների սեփականատերերի և համապատասխան ներկայական իրավական նորմերի համաձայն այդ իրավունքներն իրականացնելու համար լիազորված անձանց կողմից:

2. 1-ին պարբերությամբ սահմանված պայմանների պահպանմամբ՝ ապրանքային նշանի գրանցման վերաբերյալ առարկությունների մասին ծանուցումը կարող է ներկայացվել նաև հողված 44«2»-ի 2-րդ նախադասությանը համապատասխան փոփոխված հայտը հրապարակելու դեպքում:

3. Առարկությունը պետք է ներկայացվի գրավոր և նշի առարկության հիմքերը: Այն չի համարվում սահմանված կարգով ընդունված, քանի դեռ առարկություն ներկայացնելու համար տուրքը չի վճարվել: Գրասենյակի կողմից սահմանված ժամկետում առարկություն ներկայացնողը կարող է իր առարկությունը հիմնավորել փաստերով, ապացույցներով և փաստարկներով:

Հողված 43

Առարկության ուսումնասիրությունը

1. Առարկությունն ուսումնասիրելիս Գրասենյակն անհրաժեշտ հաճախականությամբ հրավիրում է կողմերին՝ իր կողմից սահմանված ժամկետում ներկայացնելու մյուս կողմերի կամ իր կողմից տրված հաղորդումների վերաբերյալ իրենց դիտողությունները:

2. Հայտատուի պահանջով, առարկության վերաբերյալ ծանուցում ներկայացրած՝ ավելի վաղ առաջնությամբ Համայնքի ապրանքային նշանի սեփականատերը տրամադրում է ապացույցներ, որ Համայնքի ապրանքային նշանի հայտը հրապարակելու թվականին նախորդող 5 տարվա ընթացքում ավելի վաղ առաջնությամբ Համայնքի ապրանքային նշանն արդեն իրապես օգտագործվում էր Համայնքում այն ապրանքների կամ ծառայությունների համար, որոնց համար գրանցվել է ապրանքային նշանը, և որը նա նշում է որպես իր առարկության հիմնավորում, կամ որ ապրանքային նշանը չօգտագործելու համար կան հարգելի պատճառներ՝ պայմանով, որ ավելի վաղ առաջնությամբ Համայնքի ապրանքային նշանն այդ պահին նվազագույնը հինգ տարի գրանցված է եղել: Եթե առարկություն ներկայացնողը ապացույցներ չի բերում առ այդ, առարկությունը մերժվում է: Եթե ավելի վաղ առաջնությամբ Համայնքի ապրանքային նշանն օգտագործվել է այն ապրանքների կամ ծառայությունների միայն մի մասի համար, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը, առարկության ուսումնասիրության նպատակներով այն գրանցված է համարվում ապրանքների կամ ծառայությունների միայն այդ մասի համար:

3. 2-րդ պարբերությունը կիրառվում է հողված 8«2»«ա»-ում նշված ավելի վաղ առաջնությամբ ազգային ապրանքային նշանների նկատմամբ՝ Համայնքում օգտագործումը փոխարինելով այն անդամ պետությունում դրա օգտագործմամբ, որտեղ պահպանվում է ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանը:

4. Եթե Գրասենյակը նպատակահարմար է համարում, այն կարող է կողմերին առաջարկել կնքել հաշտության համաձայնություն:

5. Եթե առարկության ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ ապրանքային նշանը չի կարող գրանցվել որոշ կամ բոլոր ապրանքների կամ ծառայությունների համար, որոնց համար ներկայացվել է Համայնքի ապրանքային նշանի հայտը, նշված ապրանքների կամ

ծառայությունների մասով ապրանքային նշանի հայտը մերժվում է: Հակառակ դեպքում մերժվում է առարկությունը:

6. Հայտը մերժելու վերաբերյալ որոշումը հրապարակվում է վերջնական դառնալուն պես:

ՄԱՍ 5

ՀԱՅՏԻ ՀԵՏԿԱՆՉՈՒՄԸ, ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 44

Հայտի հետկանչումը, սահմանափակումը և փոփոխությունները

1. Հայտատուն կարող է ցանկացած ժամանակ հետ կանչել Համայնքի ապրանքային նշանի իր հայտը կամ սահմանափակել դրանում նշված ապրանքների կամ ծառայությունների ցանկը: Եթե հայտն արդեն հրապարակվել է, ապա հետկանչումը կամ ապրանքների կամ ծառայությունների ցանկի սահմանափակումը նույնպես հրապարակվում են:

2. Այլ առումներով Համայնքի ապրանքային նշանի հայտը կարող է փոփոխվել հայտատուի դիմումի համաձայն՝ ուղղելով միայն հայտատուի անունը և հասցեն, ձևակերպման կամ արտագրման հետ կապված սխալները կամ ակնհայտ անճշտությունները՝ պայմանով, որ կատարված ուղղումը էապես չի փոխում ապրանքային նշանը կամ չի ընդլայնում ապրանքների կամ ծառայությունների ցանկը: Եթե փոփոխություններն անդրադառնում են ապրանքային նշանի պատկերի կամ ապրանքների կամ ծառայությունների ցանկի վրա և կատարվում են հայտը հրապարակելուց հետո, հրապարակվում է ապրանքային նշանի հայտի փոփոխված տարբերակը:

ՄԱՍ 6

ԳՐԱՆՑՈՒՄԸ

Հոդված 45

Գրանցումը

Եթե բավարարված են հայտը ներկայացնելու՝ սույն Կանոնակարգով սահմանված պահանջները, և եթե առարկության մասին ծանուցում չի ստացվել հոդված 42«1»-ում նշված ժամկետում, կամ եթե առարկությունը մերժվել է վերջնական որոշմամբ, ապրանքային նշանը գրանցվում է որպես Համայնքի ապրանքային նշան՝ պայմանով, որ ապրանքային նշանի գրանցման համար տուրքը վճարվել է սահմանված ժամկետում: Եթե տուրքը չի վճարվում այդ ժամկետում, հայտը համարվում է հետկանչված:

Հոդված 46

Գրանցման գործողության ժամկետը

Ապրանքային նշանների գրանցումը գործում է հայտը ներկայացնելու թվականից հետո տասը տարի: Ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը կարող է երկարաձգվել տասնամյա ժամկետներով՝ 47-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 47

Գործողության ժամկետի երկարաձգումը

1. Համայնքի ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգվում է ապրանքային նշանի սեփականատիրոջ կամ վերջինիս կողմից ուղղակիորեն լիազորված ցանկացած անձի դիմումի համաձայն՝ տուրքերը վճարելու դեպքում:

2. Ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը լրանալուց առաջ Գրասենյակն այդ մասին պատշաճ ժամկետում տեղեկացնում է Համայնքի ապրանքային նշանի սեփականատիրոջը և Համայնքի ապրանքային նշանի նկատմամբ գրանցված իրավունք ունեցող ցանկացած անձի: Գրասենյակը պատասխանատվություն չի կրում նշված տեղեկությունը չտրամադրելու համար:

3. Ապրանքային նշանի գործողության ժամկետի երկարաձգման դիմումը ներկայացվում է վեց ամսվա ընթացքում, որն ավարտվում է այն ամսվա վերջին օրը, երբ ավարտվում է պահպանության ժամկետը: Տուրքերը նույնպես վճարվում են այս ժամանակահատվածում: Հակառակ դեպքում, դիմումը կարող է ներկայացվել և տուրքերը կարող են վճարվել 1-ին նախադասությունում նշված օրվան հաջորդող հետագա վեց ամսվա ընթացքում՝ այդ հետագա ժամկետի ընթացքում լրացուցիչ տուրքի վճարման պայմանով:

4. Եթե դիմումը ներկայացվում է կամ տուրքերը վճարվում են միայն որոշ ապրանքների կամ ծառայությունների մասով, որոնց համար գրանցվել է Համայնքի ապրանքային նշանը, ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգվում է միայն այդ ապրանքների կամ ծառայությունների համար:

5. Գրանցման գործողության ժամկետը երկարաձգվում է դրա գործողության ժամկետի ավարտին հաջորդող օրվանից: Գործողության ժամկետի երկարաձգումը գրանցվում է:

Հոդված 48

Ապրանքային նշանի փոփոխությունը

1. Համայնքի ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետի ընթացքում և այն երկարաձգելու դեպքում Համայնքի ապրանքային նշանը գրանցամատյանում չի փոխվում:

2. Այնուամենայնիվ, եթե Համայնքի ապրանքային նշանը ներառում է սեփականատիրոջ անունը և հասցեն, դրա ցանկացած փոփոխություն, որը էականորեն չի ազդում ի սկզբանե

գրանցված ապրանքային նշանի նույնականության վրա, կարող է գրանցվել սեփականատիրոջ դիմումի համաձայն:

3. Ապրանքային նշանի փոփոխության հրապարակումը պետք է ներկայացնի Համայնքի ապրանքային նշանի փոփոխված տարբերակի պատկերը: Երրորդ անձինք, որոնց իրավունքները կարող է շոշափել ապրանքային նշանում կատարված փոփոխությունը, կարող են գրանցումը վիճարկել հրապարակումից հետո 3 ամսվա ընթացքում:

ԲԱԺԻՆ VI. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԸ ԶԻՋԵԼԸ, ԴՐԱ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ ԵՎ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՍ 1

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԸ ԶԻՋԵԼԸ

Հոդված 49

Ապրանքային նշանը զիջելը

1. Համայնքի ապրանքային նշանը կարող է զիջվել բոլոր այն ապրանքների, ծառայությունների կամ դրանց մի մասի համար, որոնց համար գրանցվել է ապրանքային նշանը:

2. Ապրանքային նշանի սեփականատերը ապրանքային նշանը զիջելու մասին գրավոր տեղեկացնում է Գրասենյակին: Այն իրավաբանական ուժ չունի, քանի դեռ չի գրանցվել գրանցամատյանում:

3. Ապրանքային նշանը զիջելու մասին գրանցամատյանում գրառում կատարվում է միայն դրանում գրանցված իրավատիրոջ համաձայնությամբ: Գրանցված լիցենզիայի առկայության դեպքում գրանցամատյանում ապրանքային նշանը զիջելու մասին գրառում կատարվում է միայն այն դեպքում, երբ ապրանքային նշանի սեփականատերն ապացույցներ է ներկայացնում առ այն, որ նա լիզենզատուին տեղեկացրել է ապրանքային նշանը զիջելու իր մտադրության մասին. գրանցամատյանում գրառումը կատարվում է Կիրարկող կանոնակարգով սահմանված ժամկետի ավարտին:

ՄԱՍ 2

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

Հոդված 50

Ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու հիմքերը

1. Ապրանքային նշանի սեփականատիրոջ իրավունքները ճանաչվում են չեղյալ հայտարարված Գրասենյակ ներկայացված դիմումի կամ ապրանքային նշանի ապօրինի օգտագործման վերաբերյալ վարույթի շրջանակներում հարուցված հակընդդեմ հայցի հիման վրա՝

ա) եթե ապրանքային նշանը հինգ տարի անընդմեջ Համայնքում իրապես չի օգտագործվել այն ապրանքների կամ ծառայությունների մասով, որոնց համար այն գրանցվել է, և

ապրանքային նշանը չօգտագործելու համար հարգելի պատճառներ չկան. այնուամենայնիվ ոչ ոք չի կարող պահանջել, որպեսզի ապրանքային նշանի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները չեղյալ հայտարարվեն, եթե հնգամյա ժամկետի ավարտի և հայտը կամ հակընդդեմ հայցը ներկայացնելու միջև ընկած ժամանակահատվածում սկսվել կամ վերսկսվել է ապրանքային նշանի իրապես օգտագործումը. եթե ապրանքային նշանի օգտագործումն սկսվել կամ վերսկսվել է ապրանքային նշանի հայտը կամ հակընդդեմ հայցը ներկայացնելու թվականին նախորդող երեք ամսվա ընթացքում, որն սկսվել է ամենաշուտը նշանը չօգտագործելու հնգամյա շարունակական ժամկետի ավարտին, ապա այդ հանգամանքը, այնուամենայնիվ, հաշվի չի առնվում, եթե ապրանքային նշանի իրապես օգտագործումը սկսելու կամ վերսկսելու հետ կապված նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են այն բանից հետո միայն, երբ ապրանքային նշանի սեփականատիրոջը հայտնի է դառնում հայտ կամ հակընդդեմ հայց ներկայացնելու հնարավորության մասին.

բ) եթե սեփականատիրոջ գործողությունների կամ անգործության հետևանքով ապրանքային նշանը առևտրային գործունեության ընթացքում դարձել է այն ապրանքի կամ ծառայության ընդհանուր անվանում, որի համար գրանցվել է ապրանքային նշանը.

գ) եթե ապրանքային նշանի սեփականատիրոջ կողմից կամ իր համաձայնությամբ այն ապրանքների կամ ծառայությունների մասով, որոնց համար գրանցվել է ապրանքային նշանը, ապրանքային նշանի օգտագործման հետևանքով այն կարող է մոլորության մեջ գցել հանրությանը՝ մասնավորապես այդ ապրանքների կամ ծառայությունների բնույթի, որակի կամ աշխարհագրական ծագման հարցում.

դ) եթե ապրանքային նշանի սեփականատերը այլևս չի բավարարում 5-րդ հոդվածով սահմանված պայմանները:

2. Եթե սեփականատիրոջ իրավունքները չեղյալ հայտարարելու հիմքերն առկա են միայն որոշ ապրանքների կամ ծառայությունների մասով, որոնց համար գրանցվել է Համայնքի ապրանքային նշանը, սեփականատիրոջ իրավունքները համարվում են չեղյալ հայտարարված միայն այդ ապրանքների կամ ծառայությունների մասով:

ՄԱՍ 3

ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հոդված 51

Անվավերության բացարձակ հիմքերը

1. Ապրանքային նշանն անվավեր է ճանաչվում Գրասենյակ ներկայացված դիմումի կամ ապրանքային նշանի ապօրինի օգտագործման վերաբերյալ վարույթի շրջանակներում հարուցված հակընդդեմ հայցի հիման վրա՝

ա) եթե Համայնքի ապրանքային նշանը գրանցվել է 5-րդ կամ 7-րդ հոդվածի դրույթների խախտմամբ.

բ) եթե հայտատուն ապրանքային նշանի հայտ ներկայացնելիս գործում էր անբարեխիղճ կերպով:

2. Եթե Համայնքի ապրանքային նշանը գրանցվել է հոդված 7«1»«բ»,«գ»-ի կամ «դ»-ի դրույթների խախտումով, այն, այդուհանդերձ, կարող է անվավեր չճանաչվել, եթե ապրանքային նշանի օգտագործման արդյունքում, գրանցումից հետո այն տարբերակիչ հատկանիշ է ձեռք բերել այն ապրանքների կամ ծառայությունների մասով, որոնց համար գրանցվել է ապրանքային նշանը:

3. Եթե ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու հիմքն առկա է միայն որոշ ապրանքների կամ ծառայությունների մասով, որոնց համար գրանցվել է Համայնքի ապրանքային նշանը, ապրանքային նշանն անվավեր է ճանաչվում միայն այդ ապրանքների կամ ծառայությունների մասով:

Հոդված 52

Ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու հարաբերական հիմքերը

1. Ապրանքային նշանն անվավեր է ճանաչվում Գրասենյակ ներկայացված հայտի կամ ապրանքային նշանի ապօրինի օգտագործման վերաբերյալ վարույթի շրջանակներում հարուցված հակընդդեմ հայցի հիման վրա.

ա) եթե գոյություն ունի հոդված 8«2»-ում նշված ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշան, և այդ հոդվածի 1-ին կամ 5-րդ պարբերությամբ սահմանված պայմանները բավարարված են.

բ) եթե գոյություն ունի հոդված 8«3»-ում նշված ապրանքային նշան, և այդ պարբերությամբ սահմանված պայմանները բավարարված են.

գ) եթե առկա է հոդված 8«4»-ում նշված առավել վաղ ծագած իրավունք, և այդ պարբերությամբ սահմանված պայմանները բավարարված են:

2. Համայնքի ապրանքային նշանը նաև անվավեր է ճանաչվում Գրասենյակ ներկայացված դիմումի կամ ապրանքային նշանի ապօրինի օգտագործման վերաբերյալ վարույթի շրջանակներում հարուցված հակընդդեմ հայցի հիման վրա, եթե նշված ապրանքային նշանի օգտագործումը կարող է արգելվել ներպետական իրավունքի այն նորմերին համապատասխան, որոնք կարգավորում են առավել վաղ ծագած ցանկացած այլ իրավունքի և մասնավորապես՝

ա) անվանման նկատմամբ իրավունքի պահպանությունը.

բ) անձնական դիմանկարի նկատմամբ իրավունքի պահպանությունը.

գ) հեղինակային իրավունքի պահպանությունը.

դ) արդյունաբերական սեփականության իրավունքի պահպանությունը:

3. Համայնքի ապրանքային նշանը չի կարող անվավեր ճանաչվել, եթե 1-ին և 2-րդ պարբերություններում նշված իրավունքներից մեկի իրավատերը, նախքան ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելը կամ հակընդդեմ հայց հարուցելը, ուղղակիորեն համաձայնություն է տալիս Համայնքի ապրանքային նշանի գրանցմանը:

4. Եթե 1-ին և 2-րդ պարբերություններում նշված իրավունքներից մեկի իրավատերը նախկինում Համայնքի ապրանքային նշանն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմում է ներկայացրել կամ հակընդդեմ հայց է հարուցել ապրանքային նշանի ապօրինի օգտագործման վերաբերյալ վարույթի շրջանակներում, նա չի կարող ապրանքային նշանն անվավեր ճանաչելու մասին նոր դիմում ներկայացնել կամ հակընդդեմ հայց հարուցել նշված իրավունքներից մեկ այլ իրավունքի հիման վրա, որը կարող էր վկայակոչել ի հիմնավորումն իր առաջին դիմումի կամ հակընդդեմ հայցի:

5. Կիրառվում է հոդված 51«3»-ը:

Հոդված 53

Իրավունքների սահմանափակումը լուր համաձայնության հետևանքով

1. Եթե Համայնքի ապրանքային նշանի սեփականատերը հինգ տարի շարունակ չի առարկել Համայնքի ապրանքային նշանի՝ Համայնքում իր գիտությամբ օգտագործմանը, նա այլևս իրավունք չունի ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանի հիման վրա դիմել ավելի ուշ գրանցված ապրանքային նշանն անվավեր ճանաչելու համար կամ առարկել հետագայում գրանցված ապրանքային նշանի օգտագործմանը այն ապրանքների կամ ծառայությունների մասով, որոնց համար այն օգտագործվել է՝ բացառությամբ, երբ ավելի ուշ գրանցված Համայնքի ապրանքային նշանի գրանցման հայտը անբարեխիղճ կերպով է ներկայացվել:

2. Եթե հոդված 8«2»-ում նշված ավելի վաղ առաջնությամբ ազգային ապրանքային նշանի կամ հոդված 8«4»-ում նշված ավելի վաղ առաջնությամբ այլ նշանի սեփականատերը հինգ տարի շարունակ չի առարկել ավելի ուշ գրանցված Համայնքի ապրանքային նշանի՝ իր գիտությամբ օգտագործմանը այն անդամ պետությունում, որտեղ ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանը կամ ավելի վաղ առաջնությամբ այլ նշանը պահպանվում է, նա այլևս իրավունք չունի ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանի կամ ավելի վաղ առաջնությամբ այլ նշանի հիման վրա դիմելու ավելի ուշ գրանցված ապրանքային նշանն անվավեր ճանաչելու համար կամ առարկելու հետագայում գրանցված ապրանքային նշանի օգտագործմանը այն ապրանքների կամ ծառայությունների մասով, որոնց համար հետագայում գրանցված ապրանքային նշանն օգտագործվել է, բացառությամբ, երբ ավելի ուշ գրանցված Համայնքի ապրանքային նշանի գրանցման հայտը անբարեխիղճ կերպով է ներկայացվել:

3. 1-ին և 2-րդ պարբերություններում նշված դեպքերում՝ ավելի ուշ գրանցված Համայնքի ապրանքային նշանի սեփականատերն իրավունք չունի առարկելու առավել վաղ ծագած իրավունքի օգտագործմանը, անգամ եթե այդ իրավունքն այլևս չի կարող վկայակոչվել ավելի ուշ գրանցված Համայնքի ապրանքային նշանի դեմ:

ՄԱՍ 4

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հոդված 54

Ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու և անվավեր ճանաչելու հետևանքները

1. Համարվում է, որ Համայնքի ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու մասին դիմումը ներկայացնելու կամ հակընդդեմ հայցը հարուցելու թվականից ի վեր այն չի ունեցել սույն Կանոնակարգում նշված իրավական հետևանքները, եթե սեփականատիրոջ իրավունքները չեղյալ են հայտարարվել: Կողմերից մեկի դիմումի համաձայն որոշման մեջ կարող է ամրագրվել ավելի վաղ այն թվականը, երբ ծագել է ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու հիմքերից մեկը:

2. Համարվում է, որ Համայնքի ապրանքային նշանը ի սկզբանե չի ունեցել սույն Կանոնակարգում նշված իրավական հետևանքները, եթե ապրանքային նշանը անվավեր է ճանաչվել:

3. Ապրանքային նշանի սեփականատիրոջ կողմից անզգուշությամբ կամ անբարեխիղճ գործելակերպի արդյունքում պատճառված վնասի փոխհատուցման պահանջների և անհիմն հարստացման վերաբերյալ ներպետական դրույթների պահպանմամբ՝ ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու և անվավեր ճանաչելու հետադարձ ուժը չի վերաբերում՝

ա) ապրանքային նշանի ապօրինի օգտագործման վերաբերյալ ցանկացած որոշում, որը վերջնական որոշման ուժ է ստացել և կատարվել չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու մասին որոշումից առաջ.

բ) նախքան չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու մասին որոշումը կնքված որևէ պայմանագիր այնքանով, որքանով այն կատարվել է այդ որոշումից առաջ. այնուամենայնիվ, արդարության հիմքով կարող է համապատասխան պայմանագրի համաձայն վճարված գումարները վերադարձնելու պահանջ ներկայացվել՝ այնքանով, որքանով դա արդարացված է հանգամանքներով:

ՄԱՍ 5

ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՍԵՆՑԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 55

Չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումը

1. Համայնքի ապրանքային նշանի սեփականատիրոջ իրավունքները չեղյալ հայտարարելու կամ ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումը կարող է ներկայացվել Գրասենյակ՝

ա) ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից և արդյունաբերողների, արտադրողների, ծառայություններ մատուցողների, առևտրականների կամ սպառողների

շահերը ներկայացնելու նպատակով ստեղծված ցանկացած խմբի կամ մարմնի կողմից, որն իր նկատմամբ կիրառվող իրավական դրույթների համաձայն, կարող է իր անունից դատարանում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող, եթե կիրառվում են 50-րդ և 51-րդ հոդվածները.

բ) հոդված 42«1»-ում նշված անձանց կողմից, եթե կիրառվում է հոդված 52«1»-ը.

գ) հոդված 52«2»-ում նշված առավել վաղ ծագած իրավունքների իրավատերերի կամ համապատասխան անդամ պետության իրավունքի համաձայն համապատասխան իրավունքներն իրականացնելու իրավունք ունեցող անձանց կողմից, եթե կիրառվում է այդ դրույթը:

2. Դիմումը պետք է ներկայացվի գրավոր և լինի հիմնավորված: Այն չի համարվում ներկայացված, քանի դեռ տուրքը չի վճարվել:

3. Չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու մասին դիմումն անընդունելի է, եթե միննույն առարկայով և հիմքով ու նույն կողմերը ներառող հայցի վերաբերյալ որոշում է կայացվել անդամ պետության դատարանի կողմից և այն վերջնական որոշման ուժ է ստացել:

Հոդված 56

Դիմումի քննությունը

1. Իրավունքները չեղյալ հայտարարելու կամ ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումի քննության ժամանակ Գրասենյակը անհրաժեշտ հաճախականությամբ կողմերին հրավիրում է իր կողմից սահմանվելիք ժամկետում ներկայացնելու մյուս կողմերի կամ իր կողմից տրված հաղորդումների վերաբերյալ իրենց դիտողությունները:

2. Համայնքի ապրանքային նշանի սեփականատիրոջ պահանջով, ավելի վաղ առաջնությամբ Համայնքի ապրանքային նշանի սեփականատերը, որն ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ վարույթի կողմ է հանդիսանում, պետք է ներկայացնի ապացույցներ, որ Համայնքի ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումը ներկայացնելու թվականին նախորդող 5 տարվա ընթացքում ավելի վաղ առաջնությամբ Համայնքի ապրանքային նշանն իրապես օգտագործվել է Համայնքում այն ապրանքների կամ ծառայությունների մասով, որոնց համար գրանցվել է ապրանքային նշանը, և որը նա նշում է որպես իր դիմումի հիմնավորում, կամ որ ապրանքային նշանը չօգտագործելու համար գոյություն ունեն հարգելի պատճառներ՝ պայմանով, որ ավելի վաղ առաջնությամբ Համայնքի ապրանքային նշանն այդ պահին նվազագույնը հինգ տարի գրանցված է եղել: Եթե Համայնքի ապրանքային նշանի հայտի հրապարակման թվականին ավելի վաղ առաջնությամբ Համայնքի ապրանքային նշանը գրանցված է եղել նվազագույնը հինգ տարի, ավելի վաղ առաջնությամբ Համայնքի ապրանքային նշանի սեփականատերը պետք է ապացույց ներկայացնի, որ, բացի այդ, հոդված 43«2»-ում նշված պայմանները այդ թվականի դրությամբ բավարարվել են: Եթե ապրանքային նշանի սեփականատերը ապացույցներ չի ներկայացնում այդ մասին, ապա ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումը մերժվում է: Եթե ավելի վաղ առաջնությամբ Համայնքի ապրանքային նշանն օգտագործվել է այն ապրանքների կամ ծառայությունների միայն մի մասի համար, որոնց համար այն գրանցվել է, ապրանքային նշանի գրանցումն անվավեր

Ճանաչելու վերաբերյալ դիմումի քննության նպատակներով այն գրանցված է համարվում ապրանքների կամ ծառայությունների միայն այդ մասի համար:

3. 2-րդ պարբերությունը կիրառվում է հոդված 8«2»«ա»-ում նշված ավելի վաղ առաջնությամբ ազգային ապրանքային նշանների նկատմամբ՝ փոխարինելով դրա օգտագործումն այն անդամ պետությունում, որտեղ ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանը պահպանվում է, Համայնքում օգտագործմամբ:

4. Եթե Գրասենյակը նպատակահարմար է համարում, այն կարող է կողմերին առաջարկել կնքել հաշտության համաձայնություն:

5. Եթե իրավունքները չեղյալ հայտարարելու կամ ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում պարզվում է, որ ապրանքային նշանը չպետք է գրանցվեր որոշ կամ բոլոր ապրանքների կամ ծառայությունների մասով, որոնց համար այն գրանցվել է, Համայնքի ապրանքային նշանի սեփականատիրոջ իրավունքները չեղյալ են հայտարարվում կամ նշանի գրանցումն անվավեր է ճանաչվում այդ ապրանքների կամ ծառայությունների մասով: Այլապես իրավունքները չեղյալ հայտարարելու կամ ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումը մերժվում է:

6. Համայնքի ապրանքային նշանի սեփականատիրոջ իրավունքները չեղյալ հայտարարելու կամ ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշումը գրանցվում է գրանցամատյանում վերջնական դառնալուն պես:

ԲԱԺԻՆ VII. ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

Հոդված 57

Բողոքարկման ենթակա որոշումները

1. Բողոքարկման ենթակա են փորձաքննություն իրականացնողների, Առարկությունների հարցերով բաժնի, Ապրանքային նշանների կառավարման և իրավաբանական բաժնի և Գործողությունը դադարեցնելու հարցերով բաժնի որոշումները: Բողոքարկումը կասեցնում է այդ որոշումների կատարումը:

2. Որոշումը, որով վարույթը չի կարճվում կողմերից մեկի մասով, կարող է բողոքարկվել միայն վերջնական որոշման հետ միասին՝ բացառությամբ, երբ այդ որոշմամբ առանձին բողոքարկման հնարավորություն է տրվում:

Հոդված 58

Բողոք բերելու և բողոքարկման վարույթի կողմ լինելու իրավունք ունեցող անձինք

Վարույթի ցանկացած կողմ, ում շահերից չի բխում որոշումը, կարող է բողոքարկել այն: Վարույթի ցանկացած այլ կողմ բողոքարկման վարույթի կողմ է իրավունքի ուժով:

Հոդված 59

Բողոքարկման ժամկետը և կարգը

Բողոքարկման մասին ծանուցումը պետք է գրավոր կերպով Գրասենյակ ներկայացվի բողոքարկված որոշման մասին ծանուցման օրվանից հետո երկու ամսվա ընթացքում: Ծանուցումը համարվում է ներկայացված միայն բողոքարկման համար տուրքի վճարման դեպքում: Որոշման մասին ծանուցման օրվանից հետո չորս ամսվա ընթացքում պետք է ներկայացվի բողոքարկման հիմքերի գրավոր շարադրանքը:

Հոդված 60

Նախնական վերանայումը

1. Եթե վարչությունը, որի որոշումը վիճարկվում է, համարում է բողոքարկումն ընդունելի և հիմնավորված, այն փոփոխում է իր որոշումը: Մա չի կիրառվում, եթե բողոքարկողին առարկում է վարույթի մեկ այլ կողմ:
2. Եթե բողոքարկման հիմքերի շարադրանքը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում որոշումը չի փոփոխվում, բողոքն անհապաղ և առանց դրա էության վերաբերյալ մեկնաբանության ուղարկվում է Բողոքարկման խորհուրդ:

Հոդված 61

Բողոքների քննությունը

1. Եթե բողոքն ընդունելի է, Բողոքարկման խորհուրդը քննում է դրա թույլատրելիությունը:
2. Բողոքը քննելիս Բողոքարկման խորհուրդը կարող է անհրաժեշտ հաճախականությամբ կողմերին հրավիրել իր կողմից սահմանվելիք ժամկետում ներկայացնելու մյուս կողմերի կամ իր կողմից տրված հաղորդումների վերաբերյալ իրենց դիտողությունները:

Հոդված 62

Բողոքների վերաբերյալ ընդունված որոշումները

1. Բողոքի թույլատրելիությունը քննելուց հետո Բողոքարկման խորհուրդը բողոքի վերաբերյալ որոշում է կայացնում: Բողոքարկման խորհուրդը կարող է բողոքարկված որոշման համար պատասխանատու վարչության իրավասությունների շրջանակներում իրականացնել ցանկացած լիազորություն կամ գործն ուղարկել այդ վարչություն՝ լրացուցիչ քննության:
2. Եթե Բողոքարկման խորհուրդը գործը լրացուցիչ քննության համար ուղարկում է այն վարչություն, որի որոշումը բողոքարկվել է, վերջինս կաշկանդված է Բողոքարկման խորհրդի որոշումների պատճառաբանական մասով այնքանով, որքանով փաստերը նույնն են:
3. Բողոքարկման խորհրդի որոշումներն ուժի մեջ են մտնում հոդված 63«5»-ում նշված ժամկետը լրանալու օրվանից միայն, կամ, եթե այդ ժամանակահատվածում հայց է հարուցվել Արդարադատության դատարան՝ նշված հայցի մերժման օրվանից:

Հոդված 63

Արդարադատության դատարան հարուցված հայցերը

1. Բողոքների վերաբերյալ Բողոքարկման խորհրդի կողմից կայացված որոշումների դեմ հայց կարող է հարուցվել Արդարադատության դատարան:
2. Հայցը կարող է հարուցվել իրավասության բացակայության, էական ընթացակարգային պահանջների խախտման, Պայմանագրի, սույն Կանոնակարգի կամ դրանց կիրառման հետ կապված իրավական ցանկացած նորմի խախտման կամ լիազորությունների չարաշահման հիմքերով:
3. Արդարադատության դատարանն իրավասու է անվավեր ճանաչել կամ փոփոխել վիճարկվող որոշումը:
4. Բողոքարկման խորհրդում իրականացվող վարույթի ցանկացած կողմ, որի շահերից չի բխում որոշումը, կարող է նման հայց հարուցել:
5. Արդարադատության դատարան հայցը հարուցվում է Բողոքարկման խորհրդի որոշման մասին ծանուցումից հետո երկու ամսվա ընթացքում:
6. Գրասենյակը ձեռնարկում է Արդարադատության դատարանի վճիռը կատարելու համար անհրաժեշտ միջոցներ:

ԲԱԺԻՆ VIII. ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՒԼԵԿՏԻՎ ՆՇԱՆՆԵՐԸ

Հոդված 64

Համայնքի կոլեկտիվ նշանները

1. Համայնքի կոլեկտիվ նշանը Համայնքի ապրանքային նշան է, որը որպես այդպիսին բնութագրվում է, երբ հայտարկվում է նշանը, և որը կարող է տարբերակել ասոցիացիայի՝ նշանի սեփականատեր հանդիսացող անդամների ապրանքները կամ ծառայությունները այլ կազմակերպությունների ապրանքներից կամ ծառայություններից: Արդյունաբերողների, արտադրողների, ծառայություններ մատուցողների, առևտրականների ասոցիացիաները, որոնք իրենց նկատմամբ կիրառվող իրավունքի պայմանների համաձայն, կարող են իրենց անունից ունենալ բոլոր տեսակի իրավունքներ և պարտականություններ, կնքել պայմանագրեր կամ իրականացնել իրավաբանական այլ գործողություններ և դատարանում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող, ինչպես նաև հանրային իրավունքով կարգավորվող իրավաբանական անձինք կարող են Համայնքի կոլեկտիվ ապրանքային նշանի հայտ ներկայացնել:
2. Հոդված 7«1»«գ»-ից շեղման կարգով՝ այն նշանները կամ նշումները, որոնք առևտրային գործունեության ընթացքում կարող են օգտագործվել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագումը նշելու համար, կարող են 1-ին պարբերության իմաստով Համայնքի կոլեկտիվ նշան հանդիսանալ:
Կոլեկտիվ ապրանքային նշանը դրա սեփականատիրոջն իրավունք չի վերապահում երրորդ անձին արգելելու առևտրային գործունեության ընթացքում օգտագործել նման նշաններ կամ նշումներ՝ պայմանով, որ այդ անձը դրանք օգտագործում է արդյունաբերական և առևտրային

հարցերում ազնիվ գործելակերպերին համապատասխան. մասնավորապես, այդ նշանը չի կարող վկայակոչվել երրորդ անձի նկատմամբ, որն աշխարհագրական տեղանուն օգտագործելու իրավունք ունի:

3. Սույն Կանոնակարգի դրույթները կիրառվում են Համայնքի կոլեկտիվ նշանների նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ 65-72-րդ հոդվածներով:

Հոդված 65

Նշանի օգտագործումը կարգավորող կանոնակարգերը

1. Համայնքի կոլեկտիվ նշանի հայտատուն սահմանված ժամկետում պետք է դրա օգտագործումը կարգավորող կանոնակարգեր ներկայացնի:

2. Օգտագործումը կարգավորող կանոնակարգերում նշվում են նշանի օգտագործման թույլտվություն ունեցող անձինք, ասոցիացիային անդամակցելու պայմանները, և եթե դրանք առկա են, նշանի օգտագործման պայմանները՝ ներառյալ պատժամիջոցները: Հոդված 64«2»-ում նշված նշանների օգտագործումը կարգավորող կանոնակարգերով պետք է ցանկացած անձի, որի ապրանքների կամ ծառայությունների ծագման վայրը համապատասխան աշխարհագրական տարածքն է, թույլատրվի դառնալ նշանի սեփականատերը հանդիսացող ասոցիացիայի անդամ:

Հոդված 66

Հայտի մերժումը

1. Ի լրումն 36-րդ և 38-րդ հոդվածներով նախատեսված՝ Համայնքի ապրանքային նշանի հայտի մերժման հիմքերի, Համայնքի կոլեկտիվ նշանի հայտը մերժվում է, եթե 64-րդ կամ 65-րդ հոդվածի դրույթների պահանջները չեն բավարարվում, կամ եթե դրա օգտագործումը կարգավորող կանոնակարգերը հակասում են հանրային կարգին կամ բարոյականության ընդունված սկզբունքներին:

2. Համայնքի ապրանքային նշանի հայտը նաև մերժվում է, եթե հանրությունը կարող է մոլորության մեջ ընկնել նշանի բնույթի կամ դրա նշանակության հարցում, հատկապես, եթե հավանական է, որ այն ընկալվի որպես կոլեկտիվ նշան չհանդիսացող այլ նշան:

3. Հայտը չի մերժվում, եթե հայտատուն օգտագործումը կարգավորող կանոնակարգերում կատարված փոփոխությունների արդյունքում բավարարում է 1-ին և 2-րդ պարբերությունների պահանջները:

Հոդված 67

Երրորդ անձանց դիտողությունները

41-րդ հոդվածում նշված դեպքերից բացի՝ այդ հոդվածում նշված ցանկացած անձ, խումբ կամ մարմին կարող է գրավոր դիտողություններ ներկայացնել Գրասենյակ այն հատուկ հիմքերով, որոնց հիման վրա, 66-րդ հոդվածի պայմանների համաձայն, Համայնքի կոլեկտիվ նշանի հայտը պետք է մերժվի:

Հոդված 68

Նշանների օգտագործումը

Համայնքի կոլեկտիվ նշանի օգտագործումը այն օգտագործելու իրավասություն ունեցող ցանկացած անձի կողմից պետք է բավարարի սույն Կանոնակարգի պահանջները՝ պայմանով, որ Համայնքի ապրանքային նշանների օգտագործման համար սույն Կանոնակարգով սահմանված այլ պայմանները բավարարված են:

Հոդված 69

Նշանի օգտագործումը կարգավորող կանոնակարգերի փոփոխությունները

1. Համայնքի կոլեկտիվ նշանի սեփականատերը պետք է Գրասենյակ ներկայացնի դրա օգտագործումը կարգավորող ցանկացած փոփոխված կանոնակարգ:
2. Կատարված փոփոխության մասին չի նշվում գրանցամատյանում, եթե փոփոխված կանոնակարգերը չեն բավարարում 65-րդ հոդվածի պահանջները կամ եթե դրանք ներառում են 66-րդ հոդվածում նշված մերժման հիմքերից մեկը:
3. 67-րդ հոդվածը տարածվում է համայնքի կոլեկտիվ նշանի օգտագործումը կարգավորող փոփոխված կանոնակարգերի վրա:
4. Սույն Կանոնակարգը կիրառելու նպատակով, Համայնքի կոլեկտիվ նշանի օգտագործումը կարգավորող կանոնակարգերում կատարված փոփոխություններն ուժի մեջ են մտնում գրանցամատյանում փոփոխության մասին գրառում կատարելու օրվանից միայն:

Հոդված 70

Ապօրինի օգտագործման վերաբերյալ հայց հարուցելու իրավունք ունեցող անձինք

1. Հոդված 22«3» և «4»-ի՝ լիցենզառուի իրավունքներին վերաբերող դրույթները տարածվում են Համայնքի կոլեկտիվ նշան օգտագործելու իրավունք ունեցող ցանկացած անձի վրա:
2. Համայնքի կոլեկտիվ նշանի սեփականատերն իրավունք ունի փոխհատուցում պահանջելու նշանն օգտագործելու իրավունք ունեցող անձանց անունից, եթե նշանի ապօրինի օգտագործման հետևանքով վերջիններիս վնաս է պատճառվել:

Հոդված 71

Չեղյալ հայտարարելու հիմքերը

Չեղյալ հայտարարելու՝ 50-րդ հոդվածով նախատեսված հիմքերից բացի, Համայնքի կոլեկտիվ նշանի սեփականատիրոջ իրավունքները չեղյալ են հայտարարվում Գրասենյակ ներկայացված դիմումի կամ ապրանքային նշանի ապօրինի օգտագործման վերաբերյալ վարույթի շրջանակներում հարուցված հակընդդեմ հայցի հիման վրա, եթե.

ա) սեփականատերը չի ձեռնարկում ողջամիտ քայլեր՝ կանխելու նշանի օգտագործումը դրա օգտագործման առկա պայմանների հետ անհամատեղելի կերպով, որոնք սահմանվում են

դրա օգտագործումը կարգավորող կանոնակարգերով, որոնցում կատարվող փոփոխությունները, հարկ եղած դեպքում, նշվել են գրանցամատյանում.

բ) սեփականատերն այնպես է օգտագործել նշանը, որ դրանով հողված 66«2»-ում նշված ձևով մոլորության մեջ է գցել հանրությանը.

գ) նշանի օգտագործումը կարգավորող կանոնակարգերի փոփոխության մասին նշումը գրանցամատյանում կատարվել է հողված 66«2»-ի դրույթների խախտմամբ, բացառությամբ, երբ նշանի սեփականատերը, հետագայում փոփոխելով դրա օգտագործումը կարգավորող կանոնակարգերը, բավարարում է այդ դրույթների պահանջները:

Հոդված 72

Անվավերության հիմքերը

Անվավերության` 51-րդ և 52-րդ հոդվածներով նախատեսված հիմքերից բացի, 66-րդ հոդվածի դրույթների խախտմամբ գրանցված Համայնքի կոլեկտիվ նշանն անվավեր է ճանաչվում Գրասենյակ ներկայացված դիմումի կամ ապրանքային նշանի ապօրինի օգտագործման վերաբերյալ վարույթի շրջանակներում հարուցված հակընդդեմ հայցի հիման վրա, բացառությամբ, երբ նշանի սեփականատերը, փոփոխելով դրա օգտագործումը կարգավորող կանոնակարգերը, բավարարում է այդ դրույթների պահանջները:

ԲԱԺԻՆ IX. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

ՄԱՍ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 73

Որոշումների հիմնավորումների շարադրանքը

Գրասենյակի որոշումներում շարադրվում են դրանց հիմնավորումները: Դրանք պետք է հիմնվեն միայն այն հիմքերի կամ ապացույցների վրա, որոնց վերաբերյալ համապատասխան կողմերը հնարավորություն են ունեցել ներկայացնելու իրենց դիտողությունները:

Հոդված 74

Փաստերի ուսումնասիրությունը Գրասենյակի կողմից սեփական նախաձեռնությամբ

1. Վարույթներում Գրասենյակը փաստերն ուսումնասիրում է սեփական նախաձեռնությամբ. այնուամենայնիվ, գրանցումը մերժելու հարաբերական հիմքերին վերաբերող վարույթում Գրասենյակի ուսումնասիրությունը սահմանափակված է միայն կողմերի ներկայացրած փաստերով, ապացույցներով և փաստարկներով, ինչպես նաև նրանց կողմից խնդրարկվող իրավական պաշտպանության միջոցով:

2. Գրասենյակը կարող է չուսումնասիրել համապատասխան կողմերի` ոչ ժամանակին ներկայացրած փաստերը կամ ապացույցները:

Հոդված 75

Բանավոր վարույթը

1. Գրասենյակի առաջարկությամբ կամ վարույթի ցանկացած կողմի դիմումի համաձայն իրականացվում է բանավոր վարույթ, եթե Գրասենյակը նպատակահարմար է գտնում:
2. Փորձաքննություն իրականացնողների կողմից, ինչպես նաև Առարկությունների հարցերով բաժնում, Ապրանքային նշանների կառավարման և իրավաբանական բաժնում իրականացվող բանավոր վարույթները դռնփակ են:
3. Բանավոր վարույթը, այդ թվում՝ որոշման կայացումը Ապրանքային նշանների գրանցման գործողությունը դադարեցնելու հարցերով բաժնում և Բողոքարկման խորհրդում իրականացվում է դռնփակ այնքանով, որքանով այն բաժինը, որտեղ իրականացվում է վարույթը, այլ բան չի որոշում այն դեպքերում, երբ դռնփակ նիստերը կարող են լուրջ և չհիմնավորված անհարմարությունների պատճառ դառնալ՝ մասնավորապես վարույթի կողմի համար:

Հոդված 76

Ապացույցների ստացումը

1. Գրասենյակում իրականացվող ցանկացած վարույթի ժամանակ ապացույցներ կայացնելու կամ ստանալու եղանակներն են՝
 - ա) կողմերին լսելը.
 - բ) տեղեկություն ստանալու հարցումը.
 - գ) փաստաթղթեր և առանձին ապացույցներ ներկայացնելը.
 - դ) վկաներին լսելը.
 - ե) փորձագետների եզրակացությունները.
 - զ) երդմամբ ուղեկցվող կամ հաստատված գրավոր հայտարարությունները կամ հայտարարության կազմման վայրի պետության իրավունքի համաձայն հավասարազոր հայտարարությունները:
2. Համապատասխան բաժինը կարող է ներկայացված ապացույցների ուսումնասիրությունը հանձնարարել իր անդամներից մեկին:
3. Եթե Գրասենյակն անհրաժեշտ է համարում, որ կողմը, վկան կամ փորձագետը ապացույց ներկայացնեն բանավոր կերպով, այն համապատասխան անձին Գրասենյակ ներկայանալու ծանուցագիր է ուղարկում:
4. Կողմերը տեղեկացվում են Գրասենյակում վկաներին կամ փորձագետներին լսելու մասին: Նրանք իրավունք ունեն ներկա գտնվել և հարցեր տալ վկային կամ փորձագետին:

Հոդված 77

Ծանուցումը

Գրասենյակը համապատասխան անձանց բնականաբար տեղեկացնում է որոշումների, ծանուցագրերի և ցանկացած ծանուցումների կամ այլ հաղորդումների մասին, որոնք ժամկետներ են ենթադրում, կամ որոնց մասին համապատասխան անձինք պետք է ծանուցվեն սույն Կանոնակարգի կամ Կիրարկող կանոնակարգի այլ դրույթների համաձայն, կամ որոնց մասին ծանուցումը հանձնարարել է Գրասենյակի ղեկավարը:

Հոդված 78

Մինչև իրավունքի կորուստը եղած դրության վերականգնումը (*Restitutio in integrum*)

1. Համայնքի ապրանքային նշանի այն հայտատուի, սեփականատիրոջ կամ Գրասենյակում իրականացվող վարույթի ցանկացած այլ կողմի իրավունքները, որը, հանգամանքներով պահանջվող պատշաճ ուշադրություն դրսևորելով հանդերձ, ի վիճակի չէր պահպանել Գրասենյակի հետ առնչվող ժամկետը, վերականգնվում են նրա դիմումի համաձայն, եթե ժամկետը չպահպանելը սույն Կանոնակարգի դրույթների ուժով ուղղակիորեն հանգեցնում է որևէ իրավունքի կամ իրավական պաշտպանության միջոցից օգտվելու հնարավորության կորստի:

2. Դիմումը պետք է ներկայացվի գրավոր՝ ժամկետը չպահպանելու պատճառները վերանալուց հետո 2 ամսվա ընթացքում: Չիրականացված գործողությունը պետք է կատարվի այդ ժամկետում: Դիմումը ընդունելի է միայն չպահպանված ժամկետին անմիջապես հաջորդող մեկ տարվա ընթացքում: Եթե գրանցումը երկարաձգելու դիմումը չի ներկայացվում կամ երկարաձգման համար տուրքը չի վճարվում, հոդված 47«3»-ի 3-րդ նախադասությամբ նախատեսված լրացուցիչ վեցամսյա ժամանակահատվածը հանվում է մեկ տարվա ժամկետից:

3. Դիմումում պետք է նշվեն այն հիմքերը և շարադրվեն այն փաստերը, որոնց վրա այն հիմնվում է: Այն չի համարվում ներկայացված, քանի դեռ իրավունքների վերականգնման համար տուրքը չի վճարվել:

4. Դիմումի վերաբերյալ որոշում կայացնում է չիրականացված գործողության վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն ունեցող վարչությունը:

5. Սույն հոդվածի դրույթները չեն կիրառվում սույն հոդվածի 2-րդ պարբերությունում, հոդված 29«1»-ում և 42«1»-ում նշված ժամկետների նկատմամբ:

6. Եթե Համայնքի ապրանքային նշանի հայտատուն կամ սեփականատերը վերականգնում է իր իրավունքները, նա չի կարող վկայակոչել իր իրավունքները երրորդ անձի նկատմամբ, որը բարեխղճորեն ապրանքներ է շուկայահանել կամ ծառայություններ է մատուցել Համայնքի ապրանքային նշանին նույնական կամ նման նշանի ներքո՝ հայտի կամ Համայնքի ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների կորստի և այդ իրավունքների վերականգնման հրապարակման միջև ընկած ժամանակահատվածի ընթացքում:

7. Երրորդ անձը, որը կարող է օգտվել 6-րդ պարբերության դրույթներից, կարող է երրորդ անձ ներգրավող վարույթ հարուցել Համայնքի ապրանքային նշանի հայտատուի կամ

սեփականատիրոջ իրավունքների վերականգնման վերաբերյալ որոշման դեմ՝ այդ իրավունքների վերականգնման հրապարակումից հետո 2 ամսվա ընթացքում:

8. Սույն հոդվածի որևէ դրույթ չի սահմանափակում անդամ պետությունների իրավունքը՝ վերականգնելու սույն Կանոնակարգով նախատեսված և այդ պետության մարմինների հետ առնչվող ժամկետների մասով մինչև իրավունքի կորուստը եղած դրությունը:

Հոդված 79

Հղումը ընդհանուր սկզբունքներին

Սույն Կանոնակարգում, Կիրարկող կանոնակարգում, տուրքերի մասին կանոնակարգերում կամ Բողոքարկման խորհրդի ընթացակարգային կանոններում ընթացակարգային դրույթների բացակայության դեպքում Գրասենյակը հաշվի է առնում անդամ պետություններում դատավարական իրավունքի ընդհանուր ճանաչում ստացած սկզբունքները:

Հոդված 80

Ֆինանսական պարտավորությունների դադարումը

1. Տուրքերի վճարման հետ կապված Գրասենյակի իրավունքները դադարում են այն օրացուցային տարվա ավարտից հետո 4 տարվա ընթացքում, որում տուրքը ենթակա է վճարման:

2. Տուրքերը կամ դրանց վերադարձնելու՝ Գրասենյակի հանդեպ ունեցած իրավունքները դադարում են այն օրացուցային տարվա ավարտից հետո 4 տարվա ընթացքում, որում ծագել է իրավունքը:

3. 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված ժամկետներն ընդհատվում են 1-ին պարբերությամբ սահմանված դեպքում՝ տուրքի վճարման պահանջի, իսկ 2-րդ պարբերությամբ սահմանված դեպքում՝ հիմնավորված գրավոր պահանջի համաձայն: Ժամկետի ընդհատման դեպքում այն անմիջապես վերսկսվում է և ավարտվում ամենաուշը դրա սկսելու տարվա ավարտից վեց տարի հետո՝ բացառությամբ, եթե միննույն ժամանակ սկսվել է այդ իրավունքը կիրարկելու համար հարուցված դատական վարույթը. այդ դեպքում ժամկետն ավարտվում է ամենաշուտը վճռի՝ վերջնական որոշման ուժ ստանալուց մեկ տարի հետո:

ՄԱՍ 2

ԾԱԽՍԵՐԸ

Հոդված 81

Ծախսերը

1. Առարկություններ ներկայացնելու, չեղյալ հայտարարելու, անվավեր ճանաչելու կամ բողոքարկման վարույթում պարտված կողմը կրում է մյուս կողմի վճարած տուրքերը, ինչպես

նան, չսահմանափակելով հոդված 115«6»-ի գործողությունը, վերջինիս կողմից կատարած՝ վարույթի համար անհրաժեշտ բոլոր ծախսերը հոգալու պարտականությունը, այդ թվում՝ գործակալի, խորհրդատուի, փաստաբանի ճանապարհածախսը, օրապահիկը և վարձատրությունը՝ Կիրարկող կանոնակարգով սահմանված պայմանների համաձայն՝ յուրաքանչյուր ծախսային դասի համար սահմանված սանդղակի շրջանակներում:

2. Այնուամենայնիվ, եթե յուրաքանչյուր կողմ հարցերի որոշ մասով շահում է, մյուս մասով՝ պարտվում, կամ եթե արդարության սկզբունքն այդպես է պահանջում, Առարկությունների վերաբերյալ որոշումներ կայացնող բաժինը, Ապրանքային նշանի գրանցման գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշում կայացնող բաժինը կամ Բողոքարկման խորհուրդը որոշում են կայացնում ծախսերն այլ կերպ բաշխելու վերաբերյալ:

3. Այն կողմը, որը դադարեցնում է վարույթը՝ հետ կանչելով Համայնքի ապրանքային նշանի հայտը, առարկությունը, իրավունքների չեղյալ հայտարարման դիմումը, ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու դիմումը կամ բողոքարկումը կամ, չերկարաձգելով Համայնքի ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը կամ զիջելով Համայնքի ապրանքային նշանը, վճարում է մյուս կողմի տուրքերը և կրում ծախսերը՝ 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված կարգով:

4. Եթե գործի վերաբերյալ վճիռ չի կայացվում, ծախսերը բաշխվում են Առարկությունների վերաբերյալ որոշումներ կայացնող բաժնի, Ապրանքային նշանի գրանցման գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշումներ կայացնող բաժնի կամ Բողոքարկման խորհրդի հայեցողությամբ:

5. Եթե կողմերը Առարկությունների վերաբերյալ որոշումներ կայացնող բաժնում, Ապրանքային նշանի գրանցման գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշումներ կայացնող բաժնում կամ Բողոքարկման խորհրդում կնքում են նախորդ պարբերություններով նախատեսված ծախսերի բաշխումից տարբերվող ծախսերի բաշխման մասին համաձայնություն, համապատասխան վարչությունն ի գիտություն է ընդունում այդ համաձայնությունը:

6. Դիմումի համաձայն՝ Առարկությունների հարցերով բաժնի կամ Ապրանքային նշանների գրանցման գործողությունը դադարեցնելու հարցերով բաժնի կամ Բողոքարկման խորհրդի ռեզիստորը ամրագրում է նախորդ պարբերությունների համաձայն վճարվելիք ծախսերի չափը: Այսպիսով սահմանված գումարի չափը կարող է վերանայվել Առարկությունների հարցերով բաժնի կամ Ապրանքային նշանների գրանցման գործողությունը դադարեցնելու հարցերով բաժնի կամ Բողոքարկման խորհրդի որոշման համաձայն՝ սահմանված ժամկետում ներկայացված դիմումի համաձայն:

Հոդված 82

Ծախսերի չափն ամրագրող որոշումների կատարումը

1. Ծախսերի չափն ամրագրող՝ Գրասենյակի ցանկացած վերջնական որոշում ենթակա է կատարման:

2. Որոշման կատարումը կարգավորվում է դրա կատարման վայրի անդամ պետությունում գործող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերով:

Որոշումը կատարելու հրամանը, առանց որոշման իսկության հաստատումից բացի այլ ձևակերպության, կցվում է որոշմանն այն ներպետական մարմնի կողմից, որը յուրաքանչյուր անդամ պետության կառավարության կողմից նշանակվում է այդ նպատակով և որի մասին վերջինս տեղեկացնում է Գրասենյակին և Արդարադատության դատարանին:

3. Համապատասխան անձի դիմումի համաձայն այդ ձևակերպությունները կատարելուց հետո, այդ անձը կարող է որոշման կատարումը նախաձեռնել ներպետական իրավունքին համապատասխան՝ հարցն ուղղակիորեն ներկայացնելով իրավասու մարմին:

4. Որոշման կատարումը կարող է կասեցվել միայն Արդարադատության դատարանի որոշմամբ: Այնուամենայնիվ, համապատասխան երկրի դատարաններն իրավասու են քննելու որոշումները սահմանված կարգի խախտմամբ կատարելու վերաբերյալ բողոքները:

ՄԱՍ 3

ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼԸ

Հոդված 83

Համայնքի ապրանքային նշանների գրանցամատյանը

Գրասենյակը վարում է գրանցամատյան, որը հայտնի է որպես Համայնքի ապրանքային նշանների գրանցամատյան և պարունակում է այնպիսի մանրամասն տեղեկություններ, որոնց գրանցումը կամ ներառումը նախատեսված է սույն Կանոնակարգով կամ Կիրարկող կանոնակարգով: Գրանցամատյանը մատչելի է հանրության կողմից ուսումնասիրման համար:

Հոդված 84

Գործերի ուսումնասիրությունը

1. Համայնքի ապրանքային նշանի դեռևս չհրապարակված հայտերի նյութերը չպետք է մատչելի լինեն ուսումնասիրության համար առանց հայտատուի համաձայնության:

2. Ցանկացած անձ, որը կարող է ապացուցել, որ Համայնքի ապրանքային նշանի հայտատուն հայտնել է, որ ապրանքային նշանի գրանցումից հետո իր դեմ վկայակոչելու է դրանով վերապահվող իրավունքները, կարող է նյութերի ուսումնասիրություն իրականացնել նախքան հայտի հրապարակումը և առանց հայտատուի համաձայնության:

3. Համայնքի ապրանքային նշանի հայտի հրապարակումից հետո նշված հայտին և դրա արդյունքում գրանցվելիք ապրանքային նշանին վերաբերող նյութերը կարող են ուսումնասիրվել դիմումի համաձայն:

4. Այնուամենայնիվ, եթե նյութերն ուսումնասիրվում են 2-րդ կամ 3-րդ պարբերություններին համապատասխան, նյութերի որոշ փաստաթղթեր կարող են ենթակա չլինել ուսումնասիրման՝ Կիրարկող կանոնակարգերի դրույթներին համապատասխան:

Հոդված 85

Պարբերաբար կատարվող հրապարակումները

Գրասենյակը պարբերաբար հրապարակում է՝

ա) Համայնքի ապրանքային նշանների տեղեկագիր, որը պարունակում է Համայնքի ապրանքային նշանների գրանցամատյանում կատարված գրառումները, ինչպես նաև այլ մանրամասներ, որոնց հրապարակումը նախատեսված է սույն Կանոնակարգով կամ Կիրարկող կանոնակարգով.

բ) պաշտոնական տեղեկագիր, որը պարունակում է Գրասենյակի ղեկավարի կողմից տրված ծանուցումներ և տրամադրված ընդհանուր բնույթի տեղեկություններ, ինչպես նաև սույն Կանոնակարգին կամ դրա իրականացմանն առնչվող ցանկացած այլ տեղեկություն:

Հոդված 86

Վարչական համագործակցությունը

Եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոնակարգով կամ ներպետական օրենքներով, Գրասենյակը, անդամ պետությունների դատարանները կամ մարմինները հարցման համաձայն միմյանց օգնություն են տրամադրում՝ տեղեկություններ փոխանցելով կամ ուսումնասիրության համար մատչելի դարձնելով հայտի նյութերը: Եթե Գրասենյակը հայտի նյութերը մատչելի է դարձնում դատարանների, դատախազությունների կամ արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակների կողմից ուսումնասիրության համար, ապա 84-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները չեն գործում նշված մարմինների կողմից նյութերի ուսումնասիրության նկատմամբ:

Հոդված 87

Հրատարակությունների փոխանակումը

1. Գրասենյակը և անդամ պետությունների արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակները հարցման համաձայն իրենց օգտագործման համար միմյանց անվճար տրամադրում են իրենց համապատասխան հրատարակությունների մեկ կամ ավելի օրինակներ:

2. Գրասենյակը կարող է հրատարակությունների փոխանակման կամ տրամադրման վերաբերյալ պայմանագրեր կնքել:

ՄԱՍ 4

ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 88

Ներկայացուցչության ընդհանուր սկզբունքները

1. 2-րդ պարբերության դրույթների պահպանմամբ՝ ոչ ոքի չի կարելի պարտադրել Գրասենյակում հանդես գալ ներկայացուցչի միջոցով:

2. Չսահմանափակելով 3-րդ պարբերության 2-րդ նախադասության գործողությունը՝ Համայնքում բնակության (գտնվելու) կամ գործունեության հիմնական վայր կամ իրական և գործող արդյունաբերական կամ առևտրային գործունեության իրականացման վայր չունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձինք պետք է սույն Գրասենյակարգով նախատեսված բոլոր վարույթների ընթացքում ներկայացված լինեն Գրասենյակում հոդված 89«1»-ին համապատասխան՝ բացառությամբ Համայնքի ապրանքային նշանի հայտը ներկայացնելու ընթացակարգի. կիրարկող կանոնակարգով կարող են թույլատրվել այլ բացառություններ:

3. Համայնքում բնակության (գտնվելու) կամ գործունեության հիմնական վայր կամ իրական և գործող արդյունաբերական կամ առևտրային գործունեության իրականացման վայր ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց Գրասենյակում կարող է անձամբ ներկայացնել նրանց աշխատողը, որը նյութերին կցելու համար պետք է Գրասենյակ ներկայացնի ստորագրված լիազորագիր՝ Կիրարկող կանոնակարգով սահմանված կարգով: Իրավաբանական անձի աշխատողը, որի նկատմամբ կիրառվում է սույն պարբերությունը, կարող է նաև ներկայացնել այդ իրավաբանական անձի հետ տնտեսական կապեր ունեցող այլ իրավաբանական անձանց, եթե նույնիսկ այդ իրավաբանական անձանց գտնվելու կամ գործունեության հիմնական վայրը կամ իրական և գործող արդյունաբերական կամ առևտրային գործունեության իրականացման վայրը Համայնքում չէ:

Հոդված 89

Մասնագետ ներկայացուցիչները

1. Գրասենյակում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կարող է ներկայացնել միայն՝

ա) անդամ պետություններից մեկում որակավորված և Համայնքում գործունեության վայր ունեցող ցանկացած պրակտիկ իրավաբան՝ այնքանով, որքանով նա այդ պետությունում ապրանքային նշանի հետ կապված հարցերում որպես ներկայացուցիչ հանդես գալու իրավունք ունի կամ

բ) մասնագետ ներկայացուցիչներ, որոնց անունները նշված են Գրասենյակի կողմից այդ նպատակով վարվող ցուցակում:

Գրասենյակում իրականացվող վարույթին մասնակցող ներկայացուցիչները պետք է Գրասենյակ ներկայացնեն ստորագրված լիազորագիր՝ նյութերին կցելու համար՝ Կիրարկող կանոնակարգով սահմանված կարգով:

2. Ցանկացած ֆիզիկական անձ, որը բավարարում է հետևյալ պայմանները, կարող է համալրել մասնագետ ներկայացուցիչների ցուցակը՝

ա) նա պետք է լինի անդամ պետություններից մեկի քաղաքացի.

բ) նրա գործունեության վայրը Համայնքում է կամ նա աշխատում է Համայնքում.

գ) նա պետք է իրավունք ունենա ապրանքային նշանի հետ կապված հարցերում ներկայացնելու ֆիզիկական կամ իրավաբանական անձանց այն անդամ պետության արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակում, որտեղ նրա գործունեության վայրն է կամ որտեղ նա աշխատում է: Եթե տվյալ պետությունում

ապրանքային նշանի հետ կապված հարցերով ներկայացուցիչ լինելու համար անհրաժեշտ չէ հատուկ մասնագիտական որակավորումներ ունենալ, տվյալ պետության արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակում ապրանքային նշանի հետ կապված հարցերում որպես ներկայացուցիչ հանդես եկող անձինք, որոնք դիմում են ցուցակում ընդգրկվելու համար, պետք է նշված գրասենյակում ներկայացուցչության առնվազն հինգ տարվա փորձ ունենան: Այնուամենայնիվ, այն անձինք, որոնց անդամ պետություններից մեկի արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակում՝ ապրանքային նշանի հետ կապված հարցերում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց ներկայացնելու մասնագիտական որակավորումը պաշտոնապես ճանաչված է այդ պետության ընդունած կանոնակարգերին համապատասխան, կարող են չբավարարել տվյալ ոլորտում համապատասխան փորձ ունենալու պահանջը:

3. Ցուցակում ներառվելու համար անհրաժեշտ է ներկայացնել դիմում, ինչպես նաև համապատասխան անդամ պետության արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակի կողմից տրամադրված՝ 2-րդ պարբերությամբ սահմանված պայմանների բավարարումը վկայող հավաստագիր:

4. Գրասենյակի ղեկավարը կարող է ազատել՝

ա) պարբերություն 2«գ»-ի 2-րդ նախադասության պահանջների կատարումից, եթե հայտատուն ներկայացնում է ապացույց այն մասին, որ նա անհրաժեշտ որակավորումը այլ կերպ է ձեռք բերել:

բ) պարբերություն 2«ա»-ի պահանջների կատարումից՝ հատուկ հանգամանքների առկայության դեպքում:

5. Մասնագետ ներկայացուցիչների ցուցակից անձանց հանելու պայմանները սահմանվում են Կիրարկող կանոնակարգով:

ԲԱԺԻՆ X. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՑԵՐԻ ՆԿԱՏԱՍԲ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

ՄԱՍ 1

ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Հոդված 90

Իրավասության և կատարման մասին կոնվենցիայի կիրառումը

1. Եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոնակարգով, 1968 թվականի սեպտեմբերի 27-ին Բրյուսելում ստորագրված «Քաղաքացիական և առևտրային գործերով իրավասության և վճիռների կատարման մասին» կոնվենցիան՝ փոփոխված Եվրոպական համայնքների անդամակցող պետությունների՝ այդ Կոնվենցիային միանալու մասին կոնվենցիաներով, (Կոնվենցիան և միանալու մասին Կոնվենցիաներն ամբողջությամբ այսուհետ՝ Իրավասության և կատարման մասին կոնվենցիա), տարածվում է Համայնքի ապրանքային նշանների և Համայնքի ապրանքային նշանների հայտերի վերաբերյալ վարույթների, ինչպես նաև Համայնքի ապրանքային նշանների և ազգային ապրանքային նշանների հիման վրա միաժամանակյա և իրար հաջորդող վարույթների նկատմամբ:

2. 92-րդ հոդվածում նշված հայցերի և պահանջների վերաբերյալ վարույթների դեպքում՝

ա) Իրավասության և կատարման մասին կոնվենցիայի 2-րդ, 4-րդ, 24-րդ հոդվածները և հոդված 5«1»-ը, «3»-ը, «4»-ը և «5»-ը չեն կիրառվում:

բ) այդ Կոնվենցիայի 17-րդ և 18-րդ հոդվածները կիրառվում են սույն Կանոնակարգի 93«4» հոդվածի սահմանափակումների պահպանմամբ:

գ) այդ Կոնվենցիայի II բաժնի դրույթները, որոնք կիրառվում են անձանց նկատմամբ, որոնց բնակության (գտնվելու) վայրը անդամ պետությունում է, կիրառվում են նաև այն անձանց նկատմամբ, որոնց բնակության (գտնվելու) վայրը որևէ անդամ պետությունում չէ, սակայն տնտեսական գործունեության իրականացման վայրն է:

ՄԱՍ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԱՊՐՈՐԻՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՎԱՎԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԵՐԸ

Հոդված 91

Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարանները

1. Անդամ պետություններն իրենց տարածքներում նշանակում են հնարավորինս սահմանափակ թվով առաջին և երկրորդ ատյանի ներպետական դատարաններ և տրիբունալներ, այսուհետ՝ «Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարաններ», որոնք իրականացնում են սույն Կանոնակարգով իրենց վերապահված գործառույթները:

2. Յուրաքանչյուր անդամ պետություն սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո 3 տարվա ընթացքում Հանձնաժողովին ներկայացնում է Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարանների ցանկ՝ նշելով դրանց անվանումները և տարածքային ընդատության կանոնների համաձայն դրանց ընդդատյա գործերը:

3. 2-րդ պարբերությունում նշված ցանկը Հանձնաժողովին ներկայացնելուց հետո դրանում դատարանների թվի, անվանման կամ տարածքային ընդդատության կանոնների վերաբերյալ կատարված որևէ փոփոխության մասին համապատասխան անդամ պետությունն անհապաղ տեղեկացնում է Հանձնաժողովին:

4. Հանձնաժողովը 2-րդ և 3-րդ պարբերություններում նշված տեղեկությունների մասին ծանուցում է անդամ պետություններին, և դրանք հրապարակվում են Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում:

5. Քանի դեռ անդամ պետությունը չի փոխանցել 2-րդ պարբերությամբ նախատեսված ցանկը, 92-րդ հոդվածով նախատեսված հայցից կամ դիմումից բխող ցանկացած այն վարույթի նկատմամբ իրավասությունը, որի նկատմամբ, 93-րդ հոդվածի համաձայն, տվյալ անդամ պետության դատարաններն օժտված են իրավասությամբ, վերապահվում է տվյալ պետությունում այն դատարանին, որը տարածքային և առարկայական ընդդատության վերաբերյալ կանոնների համաձայն իրավասություն ունի այդ պետությունում գրանցված ազգային ապրանքային նշանի վերաբերյալ վարույթների նկատմամբ:

Հոդված 92

Իրավասությունը ապօրինի օգտագործման և վավերության վերաբերյալ հայցերի նկատմամբ

Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարանները բացառիկ իրավասություն ունեն՝

ա) ապրանքային նշանի ապօրինի օգտագործման վերաբերյալ բոլոր հայցերի, ինչպես նաև Համայնքի ապրանքային նշանների ապօրինի օգտագործման վտանգի վերաբերյալ հայցերի նկատմամբ, եթե դրանք նախատեսված են ներպետական իրավունքով.

բ) ապրանքային նշանի օգտագործման օրինականությունը ճանաչելու վերաբերյալ հայցերի նկատմամբ, եթե դրանք թույլատրվում են ներպետական իրավունքով.

գ) հոդված 9«3»-ի 2-րդ նախադասությունում նշված գործողությունների արդյունքում հարուցված բոլոր հայցերի նկատմամբ.

դ) 96-րդ հոդվածի համաձայն՝ Համայնքի ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու մասին հակընդդեմ հայցերի նկատմամբ:

Հոդված 93

Միջազգային իրավասությունը

1. Սույն Կանոնակարգի դրույթների, ինչպես նաև Իրավասության և կատարման մասին կոնվենցիայի՝ 90-րդ հոդվածի ուժով կիրառվող ցանկացած դրույթի պահպանմամբ՝ 92-րդ հոդվածում նշված հայցերի և պահանջների վերաբերյալ վարույթները հարուցվում են այն անդամ պետության դատարաններ, որտեղ պատասխանողի բնակության (գտնվելու) վայրն է, իսկ եթե նրա բնակության (գտնվելու) վայրն անդամ պետություններից որևէ մեկում չէ՝ այն անդամ պետության դատարաններ, որտեղ նրա տնտեսական գործունեության իրականացման վայրն է:

2. Եթե պատասխանողի բնակության (գտնվելու) կամ տնտեսական գործունեության իրականացման վայրն անդամ պետություններից որևէ մեկում չէ, նման վարույթները հարուցվում են այն անդամ պետության դատարաններ, որտեղ հայցվորի բնակության (գտնվելու) վայրն է, կամ եթե նրա բնակության (գտնվելու) վայրն անդամ պետություններից որևէ մեկում չէ՝ այն անդամ պետության դատարաններ, որտեղ նրա տնտեսական գործունեության իրականացման վայրն է:

3. Եթե ո՛չ պատասխանողի, ո՛չ էլ հայցվորի բնակության (գտնվելու) կամ տնտեսական գործունեության իրականացման վայրն անդամ պետությունում չէ, նման վարույթները հարուցվում են Գրասենյակի նստավայրի անդամ պետության դատարաններ:

4. Անկախ 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունների դրույթներից՝

ա) եթե կողմերը համաձայնության են գալիս Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող այլ դատարանի իրավասության վերաբերյալ, կիրառվում է Իրավասության և կատարման մասին կոնվենցիայի 17-րդ հոդվածը.

բ) եթե պատասխանողը ներկայանում է Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող այլ դատարան, կիրառվում է այդ կոնվենցիայի 18-րդ հոդվածը:

5. 92-րդ հոդվածում նշված հայցերի և պահանջների վերաբերյալ վարույթները, բացառությամբ ապրանքային նշանի օգտագործման օրինականությունը ճանաչելու վերաբերյալ հայցերի վերաբերյալ վարույթների, կարող են նաև ներկայացվել այն անդամ պետության դատարաններ, որտեղ այն ապօրինի օգտագործվել է կամ որտեղ դրա ապօրինի օգտագործման վտանգ է առկա եղել, կամ որտեղ հոդված 9«3»-ի 2-րդ նախադասության իմաստով գործողություն է իրականացվել:

Հոդված 94

Իրավասության շրջանակը

1. Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարանը, որի իրավասությունը հիմնված է հոդված 93«1»-«4»-ի վրա, իրավասություն ունի՝

- ցանկացած անդամ պետության տարածքում ապրանքային նշանի ապօրինի օգտագործման գործողությունների կամ ապօրինի օգտագործման վտանգի վերաբերյալ գործերի նկատմամբ.

- ցանկացած անդամ պետության տարածքում հոդված 9 «3»-ի 2-րդ նախադասության իմաստով կատարված գործողությունների վերաբերյալ գործերի նկատմամբ:

Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարանը, որի իրավասությունը հիմնված է հոդված 93«5»-ի վրա, իրավասություն ունի միայն ապրանքային նշանի ապօրինի օգտագործման կամ դրա վտանգ ստեղծող այն գործողությունների նկատմամբ, որոնք կատարվել են տվյալ դատարանի գտնվելու վայրի անդամ պետության տարածքում:

Հոդված 95

Ապրանքային նշանի վավերության կանխավարկածը. պաշտպանությունն ըստ գործի էության

1. Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարանները Համայնքի ապրանքային նշանը համարում են վավեր, բացառությամբ եթե պատասխանողը դրա վավերությունը վիճարկում է՝ չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ հակընդդեմ հայց հարուցելով:

2. Համայնքի ապրանքային նշանի վավերությունը չի կարող վիճարկվել ապրանքային նշանի օգտագործման օրինականությունը ճանաչելու վերաբերյալ հայցի քննության շրջանակում:

3. Հոդված 92«ա» և «գ»-ում նշված հայցերի քննության շրջանակում Համայնքի ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու պահանջը, որը ներկայացվում է հակընդդեմ հայցից բացի այլ եղանակով, ընդունելի է այնքանով, որքանով պատասխանողը պնդում է, որ Համայնքի ապրանքային նշանի սեփականատիրոջ իրավունքները կարող են չեղյալ հայտարարվել այդ Համայնքի ապրանքային նշանը

չօգտագործելու հիմքով, կամ որ Համայնքի ապրանքային նշանը կարող է անվավեր ճանաչվել՝ պատասխանողի առավել վաղ ծագած իրավունքի հիմքով:

Հոդված 96

Հակընդդեմ հայցերը

1. Չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու մասին հակընդդեմ հայցը կարող է հիմնվել միայն սույն Կանոնակարգում նշված՝ չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու հիմքերի վրա:

2. Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարանը մերժում է չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու մասին հակընդդեմ հայցը, եթե Գրասենյակի՝ նույն առարկայով, միևնույն հիմքով և նույն կողմերը ներառող որոշումն արդեն վերջնական է դարձել:

3. Եթե հակընդդեմ հայց է հարուցվել այն վարույթի շրջանակներում, որի կողմ ապրանքային նշանի սեփականատերը դեռ չի հանդիսանում, նա տեղեկացվում է այդ մասին և կարող է ներգրավվել որպես վարույթի կողմ՝ ներպետական իրավունքով սահմանված պայմաններին համապատասխան:

4. Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարանը, որտեղ հարուցվել է Համայնքի ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու մասին հակընդդեմ հայցը, Գրասենյակին տեղեկացնում է հակընդդեմ հայցը հարուցելու թվականի մասին: Գրասենյակն այդ մասին գրառում է կատարում Համայնքի ապրանքային նշանների գրանցամատյանում:

5. Կիրառվում են հոդված 56«3»-ը, «4»-ը և «6»-ը:

6. Եթե Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարանը Համայնքի ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու մասին հակընդդեմ հայցի վերաբերյալ վճիռ է կայացրել, որը դարձել է վերջնական, վճռի պատճենն ուղարկվում է Գրասենյակ: Ցանկացած կողմ կարող է դիմել այդ փոխանցման մասին տեղեկություններ ստանալու համար: Գրասենյակը վճռի մասին գրառում է կատարում Համայնքի ապրանքային նշանների գրանցամատյանում՝ Կիրարկող կանոնակարգի դրույթներին համապատասխան:

7. Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարանը, որը չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու մասին հակընդդեմ հայց է քննում, կարող է, Համայնքի ապրանքային նշանի սեփականատիրոջ դիմումի համաձայն և մյուս կողմերին լսելուց հետո, կասեցնել վարույթը և դիմել պատասխանողին, որպեսզի վերջինս Գրասենյակի կողմից սահմանված ժամկետում չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնի Գրասենյակ: Եթե դիմումը չի ներկայացվում սահմանված ժամկետում, վարույթը շարունակվում է, և համարվում է, որ պատասխանողը հրաժարվել է հակընդդեմ հայցից: Կիրառվում է հոդված 100«3»-ը:

Հոդված 97

Կիրառվող իրավունքը

1. Համայնքի ապրանքային նշանների հետ կապված դատարանները կիրառում են սույն Կանոնակարգի դրույթները:
2. Սույն Կանոնակարգով չկարգավորվող բոլոր հարցերի մասով Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարանը կիրառում է իր ներպետական իրավունքը, այդ թվում՝ իրենց միջազգային մասնավոր իրավունքը:
3. Եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոնակարգով, Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարանը կիրառում է իր նստավայրի անդամ պետությունում ներպետական ապրանքային նշանին վերաբերող միևնույն տեսակի հայցերի նկատմամբ կիրառվող ընթացակարգային կանոնները:

Հոդված 98

Պատժամիջոցները

1. Եթե Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարանը գտնում է, որ պատասխանողն ապօրինի կերպով օգտագործել է Համայնքի ապրանքային նշանը կամ դրա ապօրինի օգտագործման վտանգ է ստեղծել, ապա դատարանը պատասխանողին ապրանքային նշանի ապօրինի օգտագործումը կամ ապօրինի օգտագործման վտանգ ստեղծող գործողությունները կատարելն արգելող որոշում է կայացնում, բացառությամբ եթե այդպես չվարվելու հատուկ պատճառներ կան: Իր ներպետական իրավունքին համապատասխան՝ այն նաև այդ արգելքի կատարումն ապահովող միջոցներ է ձեռնարկում:
2. Բոլոր այլ առումներով Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարանը կիրառում է ինչպես այն անդամ պետության իրավունքը, որը խախտող կամ որի խախտման վտանգ ստեղծող գործողություններ են կատարվել, ներառյալ միջազգային մասնավոր իրավունքը:

Հոդված 99

Հայցի ապահովման միջոցները

1. Համայնքի ապրանքային նշանի կամ Համայնքի ապրանքային նշանի հայտի վերաբերյալ անդամ պետության դատարաններ, այդ թվում՝ Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարաններ կարող է ներկայացվել տվյալ անդամ պետության ազգային ապրանքային նշանների մասին իրավական նորմերով նախատեսված ժամանակավոր, այդ թվում՝ հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու միջնորդություն, եթե նույնիսկ, սույն Կանոնակարգի համաձայն, գործն ըստ էության քննելու իրավասություն ունեն մեկ այլ անդամ պետության՝ Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարանները:
2. Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարանը, որի իրավասությունը հիմնված է հոդված 93«1»,«2»,«3» կամ «4»-ի վրա, իրավասու է ձեռնարկել հայցի ապահովման միջոցներ, որոնք, Իրավասության և կատարման մասին կոնվենցիայի III

բաժնով նախատեսված՝ ճանաչման և կատարման համար անհրաժեշտ բոլոր ընթացակարգերի պահպանմամբ, ենթակա են կիրառման ցանկացած անդամ պետության տարածքում: Ոչ մի այլ դատարան օժտված չէ նման իրավասությամբ:

Հոդված 100

Փոխկապակցված հայցերի վերաբերյալ հատուկ կանոնները

1. Բացառությամբ Համայնքի ապրանքային նշանի օգտագործման օրինականությունը ճանաչելու վերաբերյալ հայցի՝ 92-րդ հոդվածում նշված հայցը քննող Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարանը, եթե չկան հայցի քննությունը շարունակելու հատուկ հիմքեր, սեփական նախաձեռնությամբ և կողմերին լսելուց հետո կամ կողմերից մեկի միջնորդությամբ և մյուս կողմերին լսելուց հետո կասեցնում է վարույթը, եթե Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող մեկ այլ դատարանում քննվող հակընդդեմ հայցի շրջանակում վիճարկվում է Համայնքի ապրանքային նշանի վավերությունը, կամ եթե չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ արդեն դիմում է ներկայացվել Գրասենյակ:

2. Գրասենյակը, չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումը քննելիս, եթե չկան դիմումի քննությունը շարունակելու հատուկ հիմքեր, սեփական նախաձեռնությամբ և կողմերին լսելուց հետո կամ կողմերից մեկի միջնորդությամբ և մյուս կողմերին լսելուց հետո, կասեցնում է վարույթը, եթե Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարանի վարույթում գտնվող հակընդդեմ հայցի շրջանակում վիճարկվում է Համայնքի ապրանքային նշանի վավերությունը: Այնուամենայնիվ, Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարանում քննվող վարույթի կողմերից մեկի միջնորդությամբ դատարանը կարող է, վարույթի մյուս կողմերին լսելուց հետո, կասեցնել վարույթը: Այդ դեպքում Գրասենյակը վերսկսում է կասեցված վարույթները:

3. Եթե Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարանը կասեցնում է վարույթը, այն կարող է կասեցման ժամանակահատվածի համար հայցի ապահովման միջոցներ ձեռնարկել:

Հոդված 101

Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող երկրորդ աստյանի դատարանների իրավասությունը. հետագա բողոքարկումը

1. 92-րդ հոդվածում նշված հայցերի և պահանջների հիման վրա հարուցված վարույթի վերաբերյալ Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող առաջին աստյանի դատարանի վճիռները բողոքարկվում են Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող երկրորդ աստյանի դատարան:

2. Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող երկրորդ աստյանի դատարան բողոք բերելու պայմանները սահմանվում են այդ դատարանի գտնվելու վայրի անդամ պետության ներպետական իրավունքով:

3. Հետագա բողոքարկման վերաբերյալ ներպետական կանոնները կիրառվում են Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող երկրորդ աստյանի դատարանի վճիռների նկատմամբ:

ՄԱՍ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅԼ ՎԵՃԵՐԸ

Հոդված 102

Համայնքի ապրանքային նշանների հետ կապված վեճեր քննող դատարաններից բացի ներպետական դատարանների իրավասության վերաբերյալ լրացուցիչ դրույթները

1. Անդամ պետությունում, որի դատարանները հոդված 90«1»-ի համաձայն օժտված են իրավասությամբ, 92-րդ հոդվածում նշված հայցերից բացի այլ հայցեր քննելու իրավասությամբ օժտված են այն դատարանները, որոնք տարածքային և առարկայական ընդդատության վերաբերյալ կանոնների համաձայն իրավասություն կունենային այդ պետությունում գրանցված ազգային ապրանքային նշանի վերաբերյալ վարույթների նկատմամբ:

2. Համայնքի ապրանքային նշանի վերաբերյալ հայցերը, բացառությամբ 92-րդ հոդվածում նշված հայցերի, որոնց նկատմամբ ոչ մի դատարան հոդված 90«1»-ի և սույն հոդվածի 1-ին պարբերության համաձայն իրավասություն չունի, կարող են քննվել Գրասենյակի նստավայրի անդամ պետության դատարաններում:

Հոդված 103

Ներպետական դատարանի պարտականությունը

92-րդ հոդվածում նշված հայցից բացի Համայնքի ապրանքային նշանի վերաբերյալ այլ հայց քննող ներպետական դատարանը ղեկավարվում է ապրանքային նշանի վավերության կանխավարկածով:

ՄԱՍ 4

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 104

Իրավասության և կատարման մասին կոնվենցիայի կիրառման հետ կապված անցումային դրույթը

Իրավասության և կատարման մասին կոնվենցիայի դրույթները, որոնք կիրառելի են համարվում սույն Կանոնակարգի նախորդ հոդվածներով, ցանկացած անդամ պետության նկատմամբ գործում են տվյալ պահի դրությամբ այդ պետությունում ուժի մեջ գտնվող տարբերակով:

ՄԱՍ 1

ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԸ

Հոդված 105

Համայնքի և ազգային ապրանքային նշանների հիման վրա հարուցված միաժամանակյա և իրար հաջորդող քաղաքացիական հայցերը

1. Եթե ապրանքային նշանի ապօրինի օգտագործման վերաբերյալ՝ միևնույն հիմքով և նույն կողմերը ներառող հայցերը հարուցվում են տարբեր անդամ պետությունների դատարաններ, որոնցից մեկը հայցը վարույթ է ընդունել Համայնքի ապրանքային նշանի, իսկ մյուսը՝ ազգային ապրանքային նշանի հիման վրա՝

ա) հայցը ոչ առաջինը վարույթ ընդունած դատարանը իր նախաձեռնությամբ հրաժարվում է իրավասությունից ի օգուտ այդ դատարանի, եթե համապատասխան ապրանքային նշանները նույնական են և վավեր նույն ապրանքների կամ ծառայությունների համար: Դատարանը, որից պահանջվում է հրաժարվել իրավասությունից, կարող է կասեցնել իր վարույթում գտնվող գործի քննությունը, եթե վիճարկվում է մյուս դատարանի իրավասությունը:

բ) գործը ոչ առաջինը վարույթ ընդունած դատարանը կարող է կասեցնել իր վարույթում գտնվող գործի քննությունը, եթե համապատասխան ապրանքային նշանները նույնական են և վավեր համանման ապրանքների կամ ծառայությունների համար, և եթե համապատասխան ապրանքային նշանները նման են և վավեր նույն կամ համանման ապրանքների կամ ծառայությունների համար:

2. Դատարանը մերժում է Համայնքի ապրանքային նշանի ապօրինի օգտագործման վերաբերյալ հայցը, եթե գործն ըստ էության լուծող վերջնական վճիռ է կայացվել նույն ապրանքների կամ ծառայությունների համար վավեր նույնական ազգային ապրանքային նշանի մասին՝ միևնույն հիմքով և նույն կողմերը ներառող հայցի վերաբերյալ:

3. Դատարանը մերժում է ներպետական ապրանքային նշանի ապօրինի օգտագործման վերաբերյալ հայցը, եթե գործն ըստ էության լուծող վերջնական վճիռ է կայացվել նույն ապրանքների կամ ծառայությունների համար վավեր նույնական ազգային ապրանքային նշանի մասին՝ միևնույն հիմքով և նույն կողմերը ներառող հայցի վերաբերյալ:

4. 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունները չեն կիրառվում ժամանակավոր, այդ թվում՝ հայցի ապահովման միջոցների նկատմամբ:

ՄԱՍ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Հոդված 106

Համայնքի ապրանքային նշանների օգտագործման արգելքը

1. Եթե այլ բան նախատեսված չէ, սույն Կանոնակարգը չի շոշափում ավելի ուշ գրանցված Համայնքի ապրանքային նշանի օգտագործման հետևանքով՝ 8-րդ հոդվածի կամ հոդված 52«2»-ի իմաստով առավել վաղ ծագած իրավունքների խախտումը վկայակոչելու իրավունքը՝ անդամ պետությունների իրավական ակտերի համաձայն: Հոդված 8«2»-ի և «4»-ի իմաստով առավել վաղ ծագած իրավունքների խախտումը, այնուամենայնիվ, այլևս չի կարող վկայակոչվել, եթե առավել վաղ ծագած իրավունքի իրավատերն այլևս իրավունք չունի Համայնքի ապրանքային նշանը հոդված 53«2»-ի համաձայն անվավեր ճանաչելու դիմում ներկայացնել:

2. Եթե այլ բան նախատեսված չէ, սույն Կանոնակարգը չի շոշափում անդամ պետության քաղաքացիական, վարչական կամ քրեական իրավունքի, կամ Համայնքի իրավունքի դրույթների համաձայն վարույթ հարուցելու իրավունքը՝ նպատակ ունենալով արգելել Համայնքի ապրանքային նշանի օգտագործումն այնքանով, որքանով ազգային ապրանքային նշանի օգտագործումը կարող է արգելվել այդ անդամ պետության կամ Համայնքի իրավունքի համաձայն:

Հոդված 107

Կոնկրետ վայրերի նկատմամբ կիրառվող առավել վաղ ծագած իրավունքները

1. Առավել վաղ ծագած այն իրավունքի իրավատերը, որը տարածվում է միայն կոնկրետ վայրի վրա, կարող է առարկել Համայնքի ապրանքային նշանի օգտագործմանը այն տարածքում, որտեղ իր իրավունքը պաշտպանված է այնքանով, որքանով համապատասխան անդամ պետության իրավունքը դա թույլ է տալիս:

2. 1-ին պարբերության կիրառումը դադարում է, եթե առավել վաղ ծագած իրավունքի իրավատերը հինգ տարի շարունակ չի առարկել Համայնքի ապրանքային նշանի՝ իր գիտությամբ օգտագործմանը այն տարածքում, որտեղ իր իրավունքը պաշտպանված է, բացառությամբ, երբ Համայնքի ապրանքային նշանը հայտարկվել է անբարեխիղճ կերպով:

3. Համայնքի ապրանքային նշանի սեփականատերն իրավունք չունի առարկելու 1-ին պարբերությունում նշված իրավունքի կիրառմանը, անգամ եթե այդ իրավունքն այլևս չի կարող վկայակոչվել Համայնքի ապրանքային նշանի նկատմամբ:

Հոդված 108

Ազգային ընթացակարգ կիրառելու վերաբերյալ դիմումը

1. Համայնքի ապրանքային նշանի հայտատուն կամ սեփականատերը կարող է Համայնքի ապրանքային նշանի իր հայտը կամ Համայնքի ապրանքային նշանը ազգային ապրանքային նշանի հայտի փոխակերպելու դիմում ներկայացնել՝

ա) այնքանով, որքանով Համայնքի ապրանքային նշանի հայտը մերժվում, հետ է կանչվում կամ համարվում է հետկանչված.

բ) այնքանով, որքանով Համայնքի ապրանքային նշանի գրանցման գործողությունը դադարում է:

2. Փոխակերպում չի կատարվում՝

ա) եթե Համայնքի ապրանքային նշանի սեփականատիրոջ իրավունքները չեղյալ են հայտարարվել ապրանքային նշանը չօգտագործելու հիմքով, բացառությամբ, երբ այն անդամ պետությունում, որի մասով խնդրարկվում է փոխակերպումը, Համայնքի ապրանքային նշանն իրապես օգտագործվում է՝ այդ անդամ պետության իրավական ակտերի իմաստով.

բ) այն անդամ պետությունում պահպանության նպատակով, որտեղ, Գրասենյակի կամ ներպետական դատարանի որոշմանը համապատասխան, հայտի գրանցումը մերժելու, չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու հիմքերը տարածվում են Համայնքի ապրանքային նշանի հայտի կամ Համայնքի ապրանքային նշանի վրա:

3. Համայնքի ապրանքային նշանի հայտի կամ Համայնքի ապրանքային նշանի փոխակերպման արդյունքում առաջացած ազգային ապրանքային նշանի հայտի վրա համապատասխան անդամ պետության մասով տարածվում է Համայնքի ապրանքային նշանի հայտը ներկայացնելու թվականը, այդ հայտի կամ ապրանքային նշանի առաջնության թվականը և, ըստ անհրաժեշտության, 34-րդ կամ 35-րդ հոդվածների համաձայն խնդրարկվող՝ այդ պետության ապրանքային նշանի գլխավորությունը:

4. Եթե՝

- Համայնքի ապրանքային նշանի հայտը համարվում է հետկանչված կամ մերժվում է Գրասենյակի՝ վերջնական դարձած որոշմամբ.

- Համայնքի ապրանքային նշանի գրանցման գործողությունը դադարում է Գրասենյակի՝ վերջնական դարձած որոշման կամ Համայնքի ապրանքային նշանի զիջումը գրանցելու հետևանքով.

Գրասենյակը հայտատուին կամ սեփականատիրոջը տրամադրում է հաղորդում, որում սահմանվում է այդ հաղորդումը ներկայացնելու թվականից հետո եռամսյա ժամկետ, որի ընթացքում կարող է ներկայացվել հայտը փոխակերպելու դիմումը:

5. Եթե Համայնքի ապրանքային նշանի հայտը հետ է կանչվում կամ Համայնքի ապրանքային նշանի գրանցման գործողությունը դադարում է դրա ժամկետը չերկարաձգելու հետևանքով, հայտը փոխակերպելու դիմումը ներկայացվում է այն թվականից հետո երեք ամսվա ընթացքում, երբ հետ է կանչվում Համայնքի ապրանքային նշանի հայտը, կամ երբ լրանում է Համայնքի ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը:

6. Եթե Համայնքի ապրանքային նշանի գործողությունը դադարում է ներպետական դատարանի կայացրած որոշման հետևանքով, հայտի փոխակերպման դիմումը ներկայացվում է այն թվականից հետո երեք ամսվա ընթացքում, երբ որոշումը վերջնական որոշման ուժ է ստանում:

7. 32-րդ հոդվածում նշված հետևանքները չեն առաջանում, եթե դիմումը չի ներկայացվում սահմանված ժամկետում:

Հոդված 109

Հայտի փոխակերպման դիմումը ներկայացնելը, հրապարակելը և փոխանցելը

1. Հայտի փոխակերպման դիմումը ներկայացվում է Գրասենյակ. դիմումում նշվում են այն անդամ պետությունները, որտեղ ցանկալի է կիրառել ազգային ապրանքային նշանի գրանցման ընթացակարգը: Դիմումը չի համարվում ներկայացված, քանի դեռ չի վճարվել հայտի փոխակերպման համար սահմանված տուրքը:

2. Եթե Համայնքի ապրանքային նշանի հայտը հրապարակվել է, հայտի փոխակերպման ցանկացած դիմումի ստացման մասին գրառում է կատարվում Համայնքի ապրանքային նշանների գրանցամատյանում, և դիմումը հրապարակվում է:

3. Գրասենյակը ստուգում է՝ արդյոք հոդված 108«1»-ի համաձայն տվյալ հայտի փոխակերպման դիմում կարող է ներկայացվել, արդյոք դիմումը ներկայացվել է հոդված 108«4», «5» կամ «6»-ով սահմանված ժամկետում՝ կախված յուրաքանչյուր դեպքից, և արդյոք հայտի փոխակերպման համար սահմանված տուրքը վճարվել է: Եթե այս պայմանները բավարարված են, Գրասենյակը դիմումը փոխանցում է դրանում նշված պետությունների արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակներ: Համապատասխան պետության արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակի հարցման համաձայն, Գրասենյակը վերջինիս տրամադրում է ցանկացած տեղեկություն, որն այդ գրասենյակին դիմումի ընդունելիության վերաբերյալ որոշում կայացնելու հնարավորություն կտա:

Հոդված 110

Հայտի փոխակերպման ձևական պահանջները

1. Դիմումի ընդունելիության վերաբերյալ որոշում է կայացնում արդյունաբերական սեփականության ցանկացած կենտրոնական գրասենյակ, որին փոխանցվում է դիմումը:

2. 109-րդ հոդվածին համապատասխան փոխանցված Համայնքի ապրանքային նշանի հայտի կամ Համայնքի ապրանքային նշանի նկատմամբ չեն կիրառվում ներպետական իրավունքի ձևական պահանջները, որոնք տարբեր են սույն Կանոնակարգով կամ Կիրարկող կանոնակարգով նախատեսված պահանջներից կամ լրացնում են դրանց:

3. Արդյունաբերական սեփականության ցանկացած կենտրոնական գրասենյակ, որին փոխանցվում է դիմումը, կարող է պահանջել, որ հայտատուն նվազագույնը երկու ամսվա ընթացքում՝

ա) վճարի ազգային հայտ ներկայացնելու համար սահմանված տուրքը.

բ) ներկայացնի դիմումի և դրան կից փաստաթղթերի՝ տվյալ պետության պաշտոնական լեզուներից մեկով թարգմանությունը.

գ) նշի տվյալ պետությունում պատշաճ ծանուցման հասցեն.

դ) տրամադրի ապրանքային նշանի պատկերը այնքան օրինակով, որքան սահմանված է տվյալ պետության կողմից:

ԲԱԺԻՆ XII. ԳՐԱՍԵՆՅԱԿԸ

ՄԱՍ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 111

Իրավական կարգավիճակը

1. Գրասենյակը Համայնքի մարմին է: Այն օժտված է իրավասուբյեկտությամբ:

2. Անդամ պետություններից յուրաքանչյուրում Գրասենյակն օժտված է այդ պետությունների իրավունքի նորմերով իրավաբանական անձանց տրամադրված ամենալայն իրավունակությամբ. մասնավորապես, այն կարող է ձեռք բերել և տնօրինել շարժական և անշարժ գույք և հանդիսանալ դատական վարույթների կողմ:

3. Գրասենյակը ներկայացնում է դրա ղեկավարը:

Հոդված 112

Աշխատակազմը

1. Եվրոպական համայնքների պաշտոնատար անձանց ներքին կանոնակարգը, Եվրոպական համայնքների այլ ծառայողների աշխատանքային պայմանները և դրանք գործողության մեջ դնելու նպատակով Եվրոպական համայնքների կառույցների միջև կնքված համաձայնությամբ ընդունված կանոնները կիրառվում են Գրասենյակի աշխատակազմի նկատմամբ՝ չսահմանափակելով 131-րդ հոդվածի կիրառումը Բողոքարկման խորհրդի անդամների նկատմամբ:

2. Չսահմանափակելով 120-րդ հոդվածի գործողությունը՝ Ներքին կանոնակարգով և Եվրոպական համայնքների այլ ծառայողների աշխատանքային պայմաններով յուրաքանչյուր կառույցին վերապահված լիազորությունները կիրառվում են Գրասենյակի կողմից իր աշխատակազմի նկատմամբ:

Հոդված 113

Արտոնությունները և անձեռնմխելիությունը

Գրասենյակի նկատմամբ կիրառվում է Եվրոպական համայնքների «Արտոնությունների և անձեռնմխելիության մասին» արձանագրությունը:

Հոդված 114

Պարտավորությունները

1. Գրասենյակի պայմանագրային պարտավորությունները կարգավորվում են տվյալ պայմանագրի նկատմամբ կիրառվող իրավունքով:

2. Արդարադատության դատարանն իրավասու է վճիռ կայացնել Գրասենյակի կողմից կնքված պայմանագրով սահմանված ցանկացած արբիտրաժային վերապահման համաձայն:

3. Ոչ պայմանագրային պարտավորությունների դեպքում Գրասենյակը, անդամ պետությունների իրավունքին ներհատուկ ընդհանուր սկզբունքներին համապատասխան, փոխհատուցում է իր բաժինների կամ իր ծառայողների կողմից իրենց պարտականությունների կատարման ընթացքում պատճառված ցանկացած վնաս:

4. 3-րդ պարբերությունում նշված վնասի փոխհատուցմանը վերաբերող վեճերի նկատմամբ իրավասությունը պատկանում է Արդարադատության դատարանին:

5. Գրասենյակի հանդեպ ծառայողների անձնական պատասխանատվությունը կարգավորվում է իրենց Ներքին կանոնակարգով կամ իրենց նկատմամբ կիրառվող Աշխատանքային պայմաններով սահմանված դրույթներով:

Հոդված 115

Լեզուները

1. Համայնքի ապրանքային նշանի հայտը ներկայացվում է Եվրոպական համայնքի պաշտոնական լեզուներից մեկով:

2. Գրասենյակի կողմից գործածվող լեզուներն են անգլերենը, ֆրանսերենը, գերմաներենը, իտալերենը և իսպաներենը:

3. Հայտատուն պետք է նշի երկրորդ լեզուն, որը Գրասենյակի կողմից գործածվող լեզուներից մեկն է, որի գործածությունը նա ընդունում է որպես առարկությունների, չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ վարույթի հնարավոր լեզու:

Եթե հայտը ներկայացվել է մի լեզվով, որը Գրասենյակի կողմից գործածվող լեզուներից և ոչ մեկը չէ, Գրասենյակը կազմակերպում է հոդված 26«1»-ում նկարագրված հայտի թարգմանությունը հայտատուի կողմից նշված լեզվով:

4. Եթե Համայնքի ապրանքային նշանի հայտատուն Գրասենյակում իրականացվող վարույթի միակ կողմն է, վարույթի լեզուն պետք է լինի այն լեզուն, որով ներկայացվել է Համայնքի ապրանքային նշանի հայտը: Եթե հայտը չի ներկայացվել Գրասենյակի կողմից գործածվող

լեզվով, Գրասենյակը կարող է գրավոր հաղորդումները հայտատուին ուղարկել վերջինիս կողմից իր հայտում նշված երկրորդ լեզվով:

5. Առարկության վերաբերյալ ծանուցումը և չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է Գրասենյակի կողմից գործածվող լեզուներից մեկով:

6. Եթե 5-րդ պարբերության համաձայն ընտրված՝ առարկության վերաբերյալ ծանուցման կամ չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումի լեզուն այն լեզուն է, որով ներկայացվել է ապրանքային նշանի հայտը կամ հայտը ներկայացնելու ժամանակ նշված երկրորդ լեզուն է, ապա վարույթի լեզուն այդ լեզուն է:

Եթե 5-րդ պարբերության համաձայն ընտրված՝ առարկության վերաբերյալ ծանուցման կամ չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումի լեզուն ո՛չ ապրանքային նշանի հայտի լեզուն է և ո՛չ էլ հայտը ներկայացնելու ժամանակ նշված երկրորդ լեզուն, առարկություն ներկայացնող կողմից կամ չեղյալ հայտարարելու, կամ անվավեր ճանաչելու համար դիմող կողմից պետք է իր հաշվին ապահովի իր դիմումի թարգմանությունը ապրանքային նշանի հայտի լեզվով՝ պայմանով, որ այդ լեզուն Գրասենյակի կողմից գործածվող լեզուն է, կամ հայտը ներկայացնելու ժամանակ նշված երկրորդ լեզվով: Հայտի թարգմանությունը կատարվում է Կիրարկող կանոնակարգով սահմանված ժամկետում: Այն լեզուն, որով թարգմանվում է հայտը, հետագայում դառնում է վարույթի լեզուն:

7. Առարկության, չեղյալ հայտարարելու, անվավեր ճանաչելու կամ բողոքարկման վարույթի կողմերը կարող են համաձայնել, որ վարույթի լեզուն լինի Եվրոպական համայնքի այլ պաշտոնական լեզու:

Հոդված 116

Հրապարակումը, գրառումները գրանցամատյանում

1. Համայնքի ապրանքային նշանի՝ հոդված 26«1»-ում նկարագրված հայտը, և բոլոր այլ տեղեկությունները, որոնց հրապարակումը նախատեսված է սույն Կանոնակարգով կամ Կիրարկող կանոնակարգով, հրապարակվում են Եվրոպական համայնքի բոլոր պաշտոնական լեզուներով:

2. Համայնքի ապրանքային նշանի գրանցամատյանում բոլոր գրառումները կատարվում են Եվրոպական համայնքի բոլոր պաշտոնական լեզուներով:

3. Վիճահարույց դեպքերում բնօրինակ է համարվում Գրասենյակի կողմից գործածվող այն լեզվով կազմված տեքստը, որով ներկայացվել է Համայնքի ապրանքային նշանի հայտը: Եթե հայտը ներկայացվել է Եվրոպական համայնքի պաշտոնական լեզուներից մեկով, որը Գրասենյակի կողմից գործածվող լեզուներից որևէ մեկը չէ, բնօրինակ է համարվում հայտատուի կողմից նշված երկրորդ լեզվով կազմված տեքստը:

Հոդված 117

Գրասենյակի գործունեության համար անհրաժեշտ թարգմանչական ծառայությունները մատուցվում են Միության կառույցների թարգմանությունների կենտրոնի կողմից՝ դրա գործունեությունը սկսելուն պես:

Հոդված 118

Օրինականության նկատմամբ հսկողությունը

1. Հանձնաժողովը ստուգում է Գրասենյակի նախագահի այն գործողությունների օրինականությունը, որոնց նկատմամբ Համայնքի իրավունքը չի նախատեսում հսկողություն մեկ այլ մարմնի կողմից, ինչպես նաև 133-րդ հոդվածի համաձայն Գրասենյակին առընթեր ստեղծված Բյուջետային հարցերով կոմիտեի գործողությունների օրինականությունը:

2. Այն պահանջում է 1-ին պարբերությունում նշված ցանկացած անօրինական գործողության փոփոխումը կամ անվավեր ճանաչումը:

3. Անդամ պետությունները, ինչպես նաև անմիջականորեն և անհատապես ներգրավված ցանկացած անձ կարող են դիմել Հանձնաժողովին՝ 1-ին պարբերությունում նշված թե ուղղակի, թե անուղղակի գործողությունների օրինականությունը քննելու նպատակով: Գործողության օրինականությունը քննելու նպատակով Հանձնաժողովին պետք է դիմել այն օրվանից հետո 15 օրվա ընթացքում, երբ կողմն առաջին անգամ տեղեկանում է համապատասխան գործողության մասին: Հանձնաժողովը որոշում է կայացնում մեկ ամսվա ընթացքում: Եթե այս ժամանակահատվածում որոշում չի կայացվում, գործը համարվում է մերժված:

ՄԱՍ 2

ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 119

Գրասենյակի ղեկավարի լիազորությունները

1. Գրասենյակի կառավարումն իրականացնում է նախագահը:

2. Այդ նպատակով նախագահը, մասնավորապես, ունի հետևյալ գործառնությունները և լիազորությունները՝

ա) ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ քայլերը, այդ թվում՝ ներքին վարչական ցուցումների ընդունումը և ծանուցումների հրապարակումը՝ Գրասենյակի գործունեությունն ապահովելու նպատակով:

բ) կարող է Հանձնաժողովին ներկայացնել սույն Կանոնակարգը, Կիրարկող կանոնակարգը, Բողոքարկման խորհրդի ընթացակարգային կանոնները, տուրքերի մասին կանոնակարգերը և Համայնքի ապրանքային նշանների նկատմամբ կիրառվող ցանկացած այլ կանոնները փոփոխելու վերաբերյալ առաջարկ՝ Վարչական խորհրդի հետ խորհրդակցելուց հետո, իսկ տուրքերի մասին կանոնակարգերի և սույն Կանոնակարգի բյուջետային դրույթների դեպքում՝ Բյուջետային հարցերով կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո:

գ) կազմում է Գրասենյակի ծախսերի ու եկամուտների նախահաշիվը և կատարում է բյուջեն:

դ) յուրաքանչյուր տարի կառավարման վերաբերյալ զեկույց է ներկայացնում Հանձնաժողովին, Եվրոպական պառլամենտին և Վարչական խորհրդին:

ե) անձնակազմի նկատմամբ իրականացնում է հոդված 112«2»-ով սահմանված լիազորությունները.

զ) կարող է պատվիրակել իր լիազորությունները:

3. Գրասենյակի ղեկավարին աջակցում են մեկ կամ ավելի տեղակալներ: Եթե գրասենյակի ղեկավարը բացակայում է կամ վատառողջ է, նրան փոխարինում է տեղակալը կամ տեղակալներից մեկը՝ Վարչական խորհրդի կողմից սահմանված կարգով:

Հոդված 120

Բարձրաստիճան պաշտոնյաների նշանակումը

1. Գրասենյակի ղեկավարը նշանակվում է Խորհրդի կողմից՝ առավելագույնը երեք թեկնածուներից բաղկացած ցուցակից, որը կազմում է Վարչական խորհուրդը: Գրասենյակի ղեկավարին զբաղեցրած պաշտոնից ազատելու լիազորությունը վերապահվում է Խորհրդին, որը որոշում է կայացնում Վարչական խորհրդի առաջարկի հիման վրա:

2. Գրասենյակի ղեկավարի պաշտոնավարման առավելագույն ժամկետը հինգ տարի է: Գրասենյակի ղեկավարի պաշտոնավարման ժամկետը կարող է երկարաձգվել:

3. Գրասենյակի ղեկավարի տեղակալը կամ տեղակալները նշանակվում և զբաղեցրած պաշտոնից ազատվում են 1-ին պարբերությամբ սահմանված կարգով՝ Գրասենյակի ղեկավարի հետ խորհրդակցելուց հետո:

4. Խորհուրդը կարգապահական իրավասություն է իրականացնում սույն հոդվածի 1-ին և 3-րդ պարբերություններում նշված պաշտոնյաների նկատմամբ:

ՄԱՍ 3

ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԴԸ

Հոդված 121

Ստեղծումը և լիազորությունները

1. Սույնով Գրասենյակին առընթեր ստեղծվում է Վարչական խորհուրդ: Չսահմանափակելով «Բյուջե և ֆինանսական վերահսկողություն» վերտառությամբ 5-րդ մասով Բյուջետային հարցերով կոմիտեին վերապահված լիազորությունները՝ Վարչական խորհուրդն օժտված է ստորև սահմանված լիազորություններով:

2. Վարչական խորհուրդը կազմում է 120-րդ հոդվածով նախատեսված թեկնածուների ցուցակները:

3. Այն, հոդված 143«3»-ի համաձայն, սահմանում է, թե որ օրվանից կարող են ներկայացվել Համայնքի ապրանքային նշանի հայտերը:

4. Այն խորհրդատվություն է տրամադրում Գրասենյակի ղեկավարին այն հարցերի շուրջ, որոնց համար պատասխանատու է Գրասենյակը:

5. Նախքան Գրասենյակում ուսումնասիրություն կատարելու համար ուղեցույցներ ընդունելը և սույն Կանոնակարգով նախատեսված այլ դեպքերում անհրաժեշտ է խորհրդակցել Վարչական խորհրդի հետ:

6. Վարչական խորհուրդը, անհրաժեշտության դեպքում, կարող է նախագահին և Հանձնաժողովին եզրակացություններ տրամադրել և տեղեկություններ ստանալու նպատակով հարցումներ ուղղել:

Հոդված 122

Կազմը

1. Վարչական խորհուրդը բաղկացած է յուրաքանչյուր անդամ պետության և Հանձնաժողովի մեկական ներկայացուցչից և նրանց փոխարինողներից:

2. Իր ընթացակարգային կանոնների դրույթների պահպանմամբ՝ Վարչական խորհրդի անդամներին կարող են օժանդակել խորհրդականներ կամ փորձագետներ:

Հոդված 123

Նախագահությունը

1. Վարչական խորհուրդն իր անդամներից ընտրում է նախագահ և փոխնախագահ: Փոխնախագահն ի պաշտոնե փոխարինում է նախագահին՝ նրա պարտականությունների կատարման անհնարինության դեպքում:

2. Նախագահի և փոխնախագահի պաշտոնավարման ժամկետը երեք տարի է: Նրանց պաշտոնավարման ժամկետը կարող է երկարաձգվել:

Հոդված 124

Նիստերը

1. Վարչական խորհրդի նիստերը հրավիրում է Նախագահը:

2. Գրասենյակի նախագահը մասնակցում է քննարկումներին, եթե Վարչական խորհուրդն այլ որոշում չի ընդունում:

3. Վարչական խորհուրդը տարին մեկ անգամ անցկացնում է հերթական նիստ. նիստեր հրավիրվում են նաև նախագահի նախաձեռնությամբ կամ Հանձնաժողովի, կամ անդամ պետությունների մեկ երրորդի պահանջով:

4. Վարչական խորհուրդն ընդունում է ընթացակարգային կանոններ:

5. Վարչական խորհուրդը որոշումները կայացնում է անդամ պետությունների ներկայացուցիչների ձայների պարզ մեծամասնությամբ: Այնուամենայնիվ, այն որոշումները, որոնց կայացումը վերապահված է Վարչական խորհրդին հոդված 120«1»-ով և «3»-ով, վերջինս կայացնում է անդամ պետությունների ներկայացուցիչների ձայների երեք քառորդ

մեծամասնությամբ: Երկու դեպքում էլ յուրաքանչյուր անդամ պետությունն ունի մեկ ձայնի իրավունք:

6. Վարչական խորհուրդը կարող է իր նիստերին մասնակցելու նպատակով դիտորդներ հրավիրել:

7. Վարչական խորհրդի քարտուղարությունը ապահովում է Գրասենյակը:

ՄԱՍ 4

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Հոդված 125

Իրավասությունը

Սույն Կանոնակարգով սահմանված ընթացակարգերի վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավասություն ունեն`

- ա) Փորձաքննություն իրականացնողները.
- բ) Առարկությունների հարցերով բաժինները.
- գ) Ապրանքային նշանների կառավարման և իրավաբանական բաժինը.
- դ) Գործողությունը դադարեցնելու հարցերով բաժինները.
- ե) Բողոքարկման խորհուրդները:

Հոդված 126

Փորձաքննություն իրականացնողները

Փորձաքննություն իրականացնողը պատասխանատու է Համայնքի ապրանքային նշանի գրանցման հայտի, այդ թվում` 36-րդ, 37-րդ, 38-րդ և 66-րդ հոդվածներում նշված հարցերի վերաբերյալ Գրասենյակի անունից որոշումներ կայացնելու համար` բացառությամբ այն հարցերի, որոնց համար պատասխանատու է Առարկությունների հարցերով բաժինը:

Հոդված 127

Առարկությունների հարցերով բաժինը

1. Առարկությունների հարցերով բաժինը պատասխանատու է Համայնքի ապրանքային նշանի գրանցման հայտի նկատմամբ առարկությունների վերաբերյալ որոշումներ կայացնելու համար:
2. Առարկությունների հարցերով բաժինը բաղկացած է երեք անդամից: Անդամներից առնվազն մեկը պետք է համապատասխանի օրենքով սահմանված պահանջներին:

Հոդված 128

Ապրանքային նշանների կառավարման և իրավաբանական բաժինը

1. Ապրանքային նշանների կառավարման և իրավաբանական բաժինը պատասխանատու է սույն Կանոնակարգով պահանջվող այն որոշումների կայացման համար, որոնք դուրս են փորձաքննություն իրականացնողի, Առարկությունների հարցերով բաժնի կամ Գործողությունը դադարեցնելու հարցերով բաժինների իրավասության շրջանակներից: Այն, մասնավորապես, պատասխանատու է Համայնքի ապրանքային նշանների գրանցամատյանում գրառումներ կատարելու վերաբերյալ որոշումներ կայացնելու համար:
2. Այն նաև պատասխանատու է 89-րդ հոդվածում նշված՝ մասնագետ ներկայացուցիչների ցուցակը վարելու համար:
3. Բաժնի որոշումը կայացնում է դրա մեկ անդամը:

Հոդված 129

Գործողությունը դադարեցնելու հարցերով բաժինները

1. Գործողությունը դադարեցնելու հարցերով բաժինը պատասխանատու է Համայնքի ապրանքային նշանը չեղյալ հայտարարելու կամ անվավեր ճանաչելու մասին դիմումների վերաբերյալ որոշումներ կայացնելու համար:
2. Գործողությունը դադարեցնելու հարցերով բաժինը բաղկացած է երեք անդամից: Անդամներից առնվազն մեկը պետք է համապատասխանի օրենքով սահմանված պահանջներին:

Հոդված 130

Բողոքարկման խորհուրդները

1. Բողոքարկման խորհուրդները պատասխանատու են փորձաքննություն իրականացնողների, Առարկությունների հարցերով բաժինների, Ապրանքային նշանների կառավարման և իրավաբանական բաժնի և Գործողությունը դադարեցնելու հարցերով բաժինների որոշումների դեմ բերված բողոքների վերաբերյալ որոշումներ կայացնելու համար:
2. Բողոքարկման խորհուրդը բաղկացած է երեք անդամից: Անդամներից առնվազն մեկը պետք է համապատասխանի օրենքով սահմանված պահանջներին:

Հոդված 131

Բողոքարկման խորհրդի անդամի անկախությունը

1. Բողոքարկման խորհրդի անդամները, այդ թվում՝ նախագահը, նշանակվում են հինգ տարի ժամկետով՝ նախագահի նշանակման համար 120-րդ հոդվածով սահմանված կարգով: Պաշտոնավարության ժամկետի ընթացքում նրանք չեն կարող պաշտոնանկ արվել, բացառությամբ, եթե դրա համար առկա են լուրջ հիմքեր, և Արդարադատության դատարանը

նրանց նշանակող մարմնի դիմումի համաձայն այդ մասին որոշում է կայացնում: Նրանց պաշտոնավարման ժամկետը կարող է երկարաձգվել:

2. Բողոքարկման խորհրդի անդամն անկախ է: Որոշումներ կայացնելիս նրանք չեն ենթարկվում որևէ ցուցումի:

3. Բողոքարկման խորհրդի անդամը չի կարող լինել փորձաքննություն իրականացնող, Առարկությունների հարցերով բաժինների, Ապրանքային նշանների կառավարման և իրավաբանական բաժնի կամ Գործողությունը դադարեցնելու հարցերով բաժինների անդամ:

Հոդված 132

Բացառումը և բացարկը

1. Փորձաքննություն իրականացնողները և Գրասենյակի շրջանակներում ստեղծված բաժինների կամ Բողոքարկման խորհրդի անդամը չի կարող մասնակցել որևէ վարույթի, եթե նա դրանում անձնական շահագրգռվածություն ունի, կամ եթե նախկինում ներգրավված է եղել դրանում՝ որպես կողմերից մեկի ներկայացուցիչ: Առարկությունների հարցերով բաժնի երեք անդամներից երկուսը չպետք է մասնակցած լինեն հայտի փորձաքննությանը: Գործողությունը դադարեցնելու հարցերով բաժինների անդամը չի կարող մասնակցել որևէ վարույթի, եթե նա մասնակցել է գրանցման կամ առարկությունների վերաբերյալ վարույթում քննվող գործի վերաբերյալ վերջնական որոշման կայացմանը: Բողոքարկման խորհրդի անդամը չի կարող մասնակցել բողոքարկման վարույթին, եթե նա մասնակցել է բողոքարկվող որոշման կայացմանը:

2. Եթե 1-ին պարբերությունում նշված հիմքերից մեկով կամ ցանկացած այլ հիմքով որևէ բաժնի կամ Բողոքարկման խորհրդի անդամը համարում է, որ չպետք է մասնակցի որևէ վարույթի, նա այդ մասին տեղեկացնում է համապատասխանաբար բաժնին կամ Բողոքարկման խորհրդին:

3. Ցանկացած կողմ կարող է բացարկ հայտնել փորձաքննություն իրականացնողներին և բաժինների կամ Բողոքարկման խորհրդի անդամներին 1-ին պարբերությունում նշված հիմքերից մեկով կամ նրանց անաչառությանը կասկածելու դեպքում: Բացարկն անընդունելի է, եթե կողմը, իմանալով բացարկ հայտնելու հիմքի մասին, դատավարական գործողություն է կատարել: Փորձաքննություն իրականացնողների կամ անդամների քաղաքացիությունը չեն կարող բացարկ հայտնելու հիմք լինել:

4. Բաժինները և Բողոքարկման խորհուրդները 2-րդ և 3-րդ պարբերություններով սահմանված դեպքերում ձեռնարկվելիք գործողությունների վերաբերյալ որոշումները կայացնում են առանց համապատասխան անդամի մասնակցության: Այդ որոշումը կայացնելու նպատակով այն անդամին, որը հայտնել է վարույթին մասնակցելուց հրաժարվելու մասին կամ որին բացարկ է հայտնվել, բաժնում կամ Բողոքարկման խորհրդում փոխարինում է նրա փոխարինողը:

ՄԱՍ 5

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 133

Բյուջետային հարցերով կոմիտեն

1. Սույն հոդվածով ստեղծվում է Գրասենյակին առընթեր Բյուջետային հարցերով կոմիտե: Բյուջետային հարցերով կոմիտեն օժտված է սույն մասով և հոդված 39«4»-ով իրեն վերապահված լիազորություններով:
2. Հոդվածներ 121«6»-ը, 124«1»-«4»-ը, «6»-ը և «7»-ը, 122-րդ և 123-րդ հոդվածները, համապատասխան փոփոխություններով (mutatis mutandis), տարածվում են Բյուջետային հարցերով կոմիտեի վրա:
3. Բյուջետային հարցերով կոմիտեն իր որոշումները կայացնում է անդամ պետությունների ներկայացուցիչների ձայների պարզ մեծամասնությամբ: Այնուամենայնիվ, որոշումները, որոնց կայացումը վերապահված է Բյուջետային հարցերով կոմիտեին հոդված 39«4»-ով, 135«3»-ով և 138-րդ հոդվածով, վերջինս կայացնում է անդամ պետությունների ներկայացուցիչների ձայների երեք քառորդ մեծամասնությամբ: Երկու դեպքում էլ յուրաքանչյուր անդամ պետություն ունի մեկ ձայնի իրավունք:

Հոդված 134

Բյուջեն

1. Յուրաքանչյուր ֆինանսական տարվա կտրվածքով կազմվում է Գրասենյակի բոլոր եկամուտների և ծախսերի նախահաշիվ, որն արտացոլվում է Գրասենյակի բյուջեում. յուրաքանչյուր ֆինանսական տարի համընկնում է օրացուցային տարվա հետ:
2. Բյուջեում արտացոլված եկամուտները և ծախսերը պետք է հաշվեկշռված լինեն:
3. Չսահմանափակելով եկամտի այլ տեսակները՝ բյուջեի եկամուտը բաղկացած է տուրքերի մասին կանոնակարգերի համաձայն վճարման ենթակա ընդհանուր գումարներից և այնքանով, որքանով անհրաժեշտ է, Եվրոպական համայնքների ընդհանուր բյուջեի՝ Հանձնաժողովին վերաբերող հատուկ հոդվածի դիմաց նշված սուբսիդիայից:

Հոդված 135

Բյուջեի նախահաշվի կազմումը

1. Նախագահը յուրաքանչյուր տարի հաջորդ տարվա համար կազմում է Գրասենյակի եկամուտների և ծախսերի նախահաշիվը և այն, պաշտոնների ցանկի հետ միասին, ուղարկում է Բյուջետային հարցերով կոմիտե ոչ ուշ, քան յուրաքանչյուր տարվա մարտի 31-ը:
2. Եթե բյուջեի նախահաշիվներով նախատեսվում է Համայնքի սուբսիդիա, Բյուջետային հարցերով կոմիտեն նախահաշիվն անմիջապես ուղարկում է Հանձնաժողով, որն էլ, իր հերթին, այն ուղարկում է Համայնքների բյուջետային հարցերով մարմնին: Հանձնաժողովը

կարող է նախահաշվին կցել դրա վերաբերյալ եզրակացություն, ինչպես նաև այլընտրանքային նախահաշիվ:

3. Բյուջետային հարցերով կոմիտեն ընդունում է բյուջեն, որը ներառում է Գրասենյակի պաշտոնների ցանկը: Եթե բյուջեի նախահաշվով Համայնքների ընդհանուր բյուջեից սուբսիդիա է նախատեսվում, Գրասենյակի բյուջեն, անհրաժեշտության դեպքում, պետք է ճշգրտվի:

Հոդված 136

Ֆինանսական հսկողությունը

Գրասենյակի բոլոր ծախսերի կատարման և վճարման, ինչպես նաև ամբողջ եկամտի գոյացման և հավաքագրման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Բյուջետային հարցերով կոմիտեի կողմից նշանակված ֆինանսական հսկիչը:

Հոդված 137

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտը

1. Ամենաուշը յուրաքանչյուր տարվա մարտի 31-ին նախագահը Հանձնաժողովին, Եվրոպական պառլամենտին, Բյուջետային հարցերով կոմիտեին և Աուդիտորների դատարան է ներկայացնում Գրասենյակի՝ նախորդ ֆինանսական տարվա ընդամենը եկամուտների և ծախսերի մասին ֆինանսական հաշվետվություն: Աուդիտորների դատարանը դրանք ուսումնասիրում է՝ Պայմանագրի հոդված 188«գ»-ին համապատասխան:

2. Բյուջետային հարցերով կոմիտեն հաստատում է Գրասենյակի բյուջեի կատարողականը, որի համար պատասխանատու է Գրասենյակի ղեկավարը:

Հոդված 138

Ֆինանսական դրույթները

Բյուջետային հարցերով կոմիտեն Եվրոպական համայնքների աուդիտորների դատարանի և Հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո ընդունում է, մասնավորապես, Գրասենյակի բյուջեի հաստատման և կատարման ընթացակարգը սահմանող ներքին ֆինանսական դրույթներ: Ֆինանսական դրույթները հիմնվում են Համայնքի կողմից ստեղծված այլ մարմինների համար ընդունված ֆինանսական կանոնակարգերի վրա այնքանով, որքանով դրանք համատեղելի են Գրասենյակի առանձնահատուկ բնույթի հետ:

Հոդված 139

Տուրքերի մասին կանոնակարգերը

1. Տուրքերի մասին կանոնակարգերով սահմանվում են, մասնավորապես, տուրքերի չափը և դրանց վճարման եղանակները:

2. Տուրքերի չափը սահմանվում է այնպիսի մակարդակով, որը Գրասենյակի բյուջեի հավասարակշռությունն ապահովելու համար սկզբունքորեն բավարար եկամուտ կերաշխավորի:

3. Տուրքերի մասին կանոնակարգերն ընդունվում և փոփոխվում են 141-րդ հոդվածով սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ XIII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 140

Համայնքի կիրարկող դրույթները

1. Սույն Կանոնակարգը կիրարկող կանոններն ընդունվում են Կիրարկող կանոնակարգով:

2. Ի լրումն նախորդ հոդվածներով նախատեսված տուրքերի, տուրքերը գանձվում են Կիրարկող կանոնակարգով սահմանված կիրառման մանրամասն կանոններին համապատասխան, ստորև նշված դեպքերում`

1. Համայնքի ապրանքային նշանի պատկերի փոփոխություն.
2. գրանցման համար սահմանված տուրքի վճարման ուշացում.
3. գրանցման վկայականի պատճենի տրամադրում.
4. Համայնքի ապրանքային նշանի փոխանցման գրանցում.
5. Համայնքի ապրանքային նշանի հետ կապված լիցենզիայի կամ մեկ այլ իրավունքի գրանցում.
6. Համայնքի ապրանքային նշանի հայտի հետ կապված լիցենզիայի կամ մեկ այլ իրավունքի գրանցում.
7. լիցենզիայի կամ մեկ այլ իրավունքի գրանցման գործողության դադարեցում.
8. գրանցված Համայնքի ապրանքային նշանի փոփոխություն.
9. գրանցամատյանից քաղվածքի տրամադրում.
10. հայտի նյութերի ուսումնասիրություն.
11. հայտի նյութերը կազմող փաստաթղթերի պատճենների տրամադրում.
12. հայտի հաստատված պատճենների տրամադրում.
13. հայտի նյութերում ներառված տեղեկությունների հաղորդում.
14. փոխհատուցման ենթակա ընթացակարգային ծախսերի սահմանման վերանայում:

3. Կիրարկող կանոնակարգը և Բողոքարկման խորհրդի ընթացակարգային կանոններն ընդունվում և փոփոխվում են 141-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 141

Կոմիտեի ստեղծումը և Կիրարկող կանոնակարգերի ընդունման կարգը

1. Հանձնաժողովին աջակցում է Տուրքերի հարցերով կոմիտեն. Հանձնաժողովը առաջնորդվում է նաև Ներքին շուկայում (ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ) համապատասխանեցման գրասենյակի այն բողոքարկման խորհուրդների կիրարկման կանոններով և ընթացակարգով, որը բաղկացած է անդամ պետությունների ներկայացուցիչներից, և որը նախագահում է Հանձնաժողովի ներկայացուցիչը:

2. Հանձնաժողովի ներկայացուցիչը կոմիտեին է ներկայացնում ձեռնարկվելիք միջոցների նախագիծ: Կոմիտեն միջոցների նախագծի մասին իր եզրակացությունը տալիս է նախագահի կողմից՝ ըստ խնդրի հրատապության սահմանված ժամկետում: Այն որոշումների դեպքում, որոնք Խորհուրդը պետք է ընդունի Հանձնաժողովի առաջարկի հիման վրա, եզրակացությունը տրվում է Պայմանագրի հոդված 148«2»-ով սահմանված մեծամասնության կողմից: Կոմիտեում անդամ պետությունների ներկայացուցիչների ձայները կշռվում են այդ հոդվածով սահմանված կարգով: Նախագահը ձայնի իրավունք չունի:

Հանձնաժողովն ընդունում է նախատեսված միջոցները, եթե դրանք համապատասխանում են Կոմիտեի եզրակացությանը:

Եթե նախատեսված միջոցները չեն համապատասխանում Կոմիտեի եզրակացությանը, կամ եթե այդպիսի եզրակացություն չի տրվել, Հանձնաժողովն անհապաղ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ առաջարկ է ներկայացնում Խորհրդին: Խորհուրդը որոշում է կայացնում ձայների որակյալ մեծամասնությամբ:

Եթե Խորհրդին դիմելուց հետո եռամսյա ժամկետի ավարտին Խորհուրդը որոշում չի կայացրել, ապա առաջարկված միջոցներն ընդունվում են Հանձնաժողովի կողմից, բացառությամբ եթե Խորհուրդը մերժել է դրանց ընդունումը ձայների պարզ մեծամասնությամբ:

Հոդված 142

Համատեղելիությունը Համայնքի այլ իրավական դրույթների հետ

Սույն Կանոնակարգը չի շոշափում «Գյուղատնտեսական արտադրանքների և սննդամթերքի աշխարհագրական նշումների և ծագման տեղանունների պահպանության մասին»⁷ Խորհրդի 1992 թվականի հուլիսի 14-ի թիվ 2081/92 կանոնակարգը (ԵՏՀ) և, մասնավորապես, դրա 14-րդ հոդվածը:

⁷ ՊՏ թիվ L 208, 24.07.1992թ., էջ. 1:

Հոդված 143

Ուժի մեջ մտնելը

1. Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 60-րդ օրը:
2. Անդամ պետությունները սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա ընթացքում ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ դրա 91-րդ և 110-րդ հոդվածները կիրարկելու նպատակով և դրանց մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:
3. Համայնքի ապրանքային նշանների հայտերը կարող են ներկայացվել Գրասենյակի ղեկավարի առաջարկության հիման վրա՝ Վարչական խորհրդի կողմից սահմանված օրվանից սկսած:
4. Համայնքի ապրանքային նշանների հայտերը, որոնք ներկայացվել են 3-րդ պարբերությունում նշված օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում, համարվում են ներկայացված այդ օրը:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անդամ պետությունների համար և դրանցում գործում է անմիջականորեն:

Կատարված է Բրյուսելում, 1993 թվականի դեկտեմբերի 20-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Ա. ԲՈՒՐՇՈՒԱ

Ներքին շուկայում (ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշներ) համապատասխանեցման գրասենյակի նստավայրի վերաբերյալ Խորհրդի և Հանձնաժողովի հայտարարությունը

«Համայնքի ապրանքային նշանի մասին» կանոնակարգն ընդունելիս Խորհուրդը և Հանձնաժողովը նշում են՝

- որ անդամ պետությունների կառավարությունների ներկայացուցիչները, հանդիպելով 1993 թվականի հոկտեմբերի 29-ին պետության և կառավարության ղեկավարների մակարդակով, որոշեցին, որ Ներքին շուկայում (ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշներ) համապատասխանեցման գրասենյակի տեղակայման վայր պետք է լինի Իսպանիայի քաղաքներից մեկը՝ Իսպանիայի կառավարության որոշմամբ.

- որ Իսպանիայի կառավարությունը որոշել է, որ Գրասենյակի նստավայրը Ալիկանտե քաղաքն է:»